

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ. ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ և ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

56ԴԳ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ. Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 20 30 ՄԱՅԻՍ 1908

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Էմիլ Զօլա եւ Իրայազ Սրուսթ

Միխայէլ Փաւա Փարազալ

Պարս Կէլ Տեղին

ԲիէՌ ՎէրմէՐ ԵՒ ՎԻԼԼԻ-Ի

Անգլոս Մամուլներ

Կանխահա Ջաթիլ

Տղա Թուառուրիւն

[Թարգմ.]

Դերբոյ [Թանասեղծութիւն]

Հմայներ [Թանասեղծութիւն]

Ժամագիրք [Գրական Ուսումնասիրութիւն]

Ա. Գարու Նորագիտ Աւետարան մի

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

X.

ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՑ

ՅՈՎԷ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՓԱՅԼԱԿ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Ռ. ՍԵՒԱԿ

ՓԱՅԼԱԿ

ՅԱՐՈՒԹԻՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Յ. Բ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՃԻՀՅՆ

1908

Rurhig

HYGIÈNE BEAUTÉ

CRÈME SIMON



୧ ୨ ୩ ୪

Մ Ի Մ Օ Ն

Կիսերինով պատասխանած
Եւ առանց որ եւ է ճարպական խղի

Հաւաքոյն արտագրութիւնն է
ան՝ պահպանելու համար ԴԷՄ-
ԲԻՆ ՈՒ ՁԵՌՔԵՐՈՒՆ
ՃԵՐԱՍԿՈՒՄԻՆ

1900ին բարիզեան ոսկի շնորհամ

Իրեւն Սիւնեւ ժողովը կը պահպանէ օգին աղիւնցութեան դէմ՝
ճաթառութեան, կարմրութիւններուն եւ խորշակահարութեան
առաջըր կ'առնէ :

Եթէ վրայէն Սիւնոնի բերձապիղջի թեթեւ խաւ մը քսուի ,
դէմքի գոյնն երիտասարդութեան շլացուցիչ փայլ մը կու տայ :

Պէտք է ամէն օր գործածել զայն, թաց լաթով մը մօրթին վրայ տարածելով և յետոյ մեղմ շփուժով մը ներս թափանցել տալով :

Ճարպային ոչ մէկ մարմին չզարուհակելով, ամբողջովին կը
լուծուի ջուրին մէջ :


ՄԻԱԿՆ Է ՍԵ ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄԶՐ ԸՂԼԱՅ ԲՈՒՈՐ ԳԵՂԱՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած, խեղաղէս առաջագահիկ ու մմննատաաջ-
նակարդ Բրեւն եւսն աղորորքեան : Բովանդակ աշխարհի մջ
իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծնր,
որոնցմէ պէտք է խորշիկ ու խոյս տալ :

Իրեւն Սիւսեւր, քրեմալոշի Սիւսեւր և Սիւսեւր
օճաւը կը գտնուին զեղարաններուն, անուշահոտե-
թեան փաճառատուններու և պաղարներու մէջ:



Գնած ասեմ պէտք է լաւ լննել վաճառանի շը՝ որ պէտք է ըլլայ
հոլի պատկերին հիւղ ճմաճը ,



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՆԵՈՎՅԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆԻԱ

56ԲԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 20

30 ՄԱՅԻՍ 1908

ԷՄԻԼ ԶՕԼԱ ԵՒ ԻՐԱՊԱՇՏ ԱՐՈՒԵՍԸ

Ֆրանսական մտաւորական աշխարհը յուզուած է այս միջոցին, և զբաղանութեան ջանակիր հոկաներ, վրդովիչ տաղնապէ մը բռնկած, տենդաճար ու աղմկայոյզ շարժումներ կը հանդիսադրեն, զբաղան դատի մը պաշտպանութեան խանդավառ եռանդով: Անմահ մը պիտի փոխադրուի Մշտնջենաւոր Կեանքի Տաճարը, Բանթէօն: Զօլաի աճիւնները Անմահութեան Դամբանին մէջ պիտի լիցնուին, և այդ ցոյցին ծախնարու և սուղոյներու հակընդդէմ ամբօխը յուզումնալից իրարանցումներով ձայն կը բարձրացնէ, խելայեղ նախանձաշուքիւնով: Որոշումը քուէարկուած է սակայն և Զօլաի պաշտպաններուն բազմանքը իրականութեան չափիլին մէջ մտած: Այս յաջողութիւնով, զբաղէար չէ՝ միայն որ կը յաղթանակէ, այլ նաեւ իր Դպրոցը, Իրապաշտ Դպրոցը, Դատը՝ որով յուզուած են աշխարհի միտքեր, միակ դէմքի մը, անհատի մը դատը չէ՝, այլ դատը զբաղան վարդապետութեան մը, որ, Զօլաի յաղթական մուտքովը՝ Բանթէօնի մէջ, կը նուիրադրծուի և կը վաւերացուի ֆրանսական իմացական աշխարհին կնիքով:

Զօլաի զբաղանութեան, հետեալար նաեւ իր ընդգրկած ու մշակած Դպրոցին խնդիրը, մեր մէջ ալ երկար տոնն զբաղեցուցած է միտքերը և մամուլը, շարունակ հակընդդէմ դաւանանքով պայքարողներ ու-

նենալով : Զօլա և իր Դպրոցը՝ արհաւիրքներ նկատուած են բարոյամոլ-
ներու ամբոխէն , ազեաալի պատուհասներ՝ նորահաս երիտասարդութեան :
Եւ այդ ամբոխումով , անհասկնալի ճառեր ու քարոզներ կարգացուած են
մեր մամուլին մէջ , մինչեւ Զօլաի մահը ու անկէ ալ ետքը : Այդ քա-
րոզչութիւնները՝ նպատակ ունեցած են , — կամ ունենալ կարծած են , —
զիցու չացնել մատաղ միտքերը՝ աւերիչ միջոցներէն Զօլաի գործին :
Զօլաի անունը և գրականութիւնը՝ մեր մէջ հոմանիշ դարձուցած են
անբարոյութեան , խենչելութեան , յայրաստութեան , լիաութեան և զինքը
հռչակած են հեղինակ մը՝ որուն գործը արդժէ , ազա , ցեխ , ճախ-
ճախուաք : Այդ հաւատքով , ուղած են զգուշացնել ընթերցող հաս-
րակութիւնը անոր ազակցի մերձաւորութենէն , զապիր ապականութե-
նէն , յայտարարելով թէ՝ Զօլա պիտի է , գարշէ , լղիւրէ , անբա-
րոյութեան մարմնացումն է : Ասիկա յախտենական քարոզը եղած է
բարոյամոլ մտքորոշումներուն :

Ինչ որ Բարոյականի մը դատին անունով կը ներկայացուի , ներք-
նապէս քննուած , Դպրոցի մը դասն է , բան մը՝ որ եղած ազմուկներուն
մէջ կը չփոխուի ու կը մոռցուի : Եւ ճիշդ հոգիէ՝ է որ կը ծագի թիւ-
րիմացութիւնը , ծնունդ տալով այն ազմուկին՝ որով չըմանակուած է
միշտ Զօլաի անունը , ինչպէս այլուր , նոյնպէս մեր մէջ : Արուեստը ,
Արուեստին ոգին կը չփոխուի գործին կեղեկին , արտաքինին հետ Բարո-
յականի դատով մը չկրնար քննուիլ երբեք գործը Զօլաի , այլ Արուես-
տի դատով : Զօլա կ'ամբաստանուի իր անբարոյական գրող . մինչդեռ
Զօլա կ'անբարոյանայ Արուեստին համար , կամ Արուեստն է որ զինքը
կ'անբարոյացնէ , եթէ անբարոյութիւն կրնայ կոչուիլ անպատճառ՝ մեր-
կապարանոց նկարագրութիւն մը : Ահա՛ թէ ո՛ւրիշ կը ծագի զայնով-
զութիւնը . Զօլա մերկապարանոց կը դրէ , հետեւաբար . անբարոյական
գրագէտ է , կամ իր գրականութիւնը անբարոյութեան պատկերացում
մըն է : Ահա ոգին՝ ընդհանուրէն յայտնուած գոտաաստին և եղած կանչ-
վառութիւնն : Փնտռել չկա՛յ թէ ինչո՞ւ մերկապարանոց է այդ գրա-
կանութիւնը , ի՞նչ պատճառներու ծնունդ է ան , գրական բռնադրոս դա՞ւ
մըն է , թէ ուղղակի հետեւանքը արուեստագէտին ընդգրկած նիւթին ,
որուն ոգին պահանջը բլրայ — ինչպէսէ՛ — քողամերկութիւնը պատ-
կերներուն , նկարագրութեան և բացատրութիւններուն : Արուեստի
հարցը հիմնովին կը մոռցուի , և ամէն զօնաստան , ամէն գնահատում
կը կտալի կեղեկին և անկէ կը բզկի : Ահա՛՛ դաճովէմ սխալը , որ չնո-
րաչար կը մարտնչէ քննադատը և իր դատումը կը չեղեցնէ ողջ-
մտութեան ու ճշմարտութեան չափովէն : Տեղն է հարցնելու նորէն . ի՞նչ
է մերկապարանոց գրականութիւնը , մերկապարանոց և դատապարտելի
է ամէն բան՝ որ բունն ոչի մը նկարագրութեանը կամ կրքոտ պատ-
կերի մը արտայայտութեանը շուրջը կը դառնայ : Ո՛չ , ստանկ պէտք

45¹ ըմբռնել մերկապարանոց կամ բաց դրականութիւնը : Գրուածք մը,
 — կամ վէպ մը, — որ ներկայացնելու համար որոշ դադափար մը,
 պատկերացնելու համար դրական կրքոտ էջ մը, վիրահատելու համար
 քնկերային չարիք մը, նկարելու համար կեանքի և զգացումներու խռժ-
 դուժ գրուածք մը, պէտք ունեցած է քօղամերկ նկարագրութեան, չկր-
 նար երբեք նկատուիլ ա՛յն մերկապարանոց դրականութիւնը, որ դատա-
 պարտելի է իր աննպատակ յղացումին և արտայայտութեանը մէջ, զուրկ
 ըլլալով հիմնովին մարմնացնելու ձգտումին ո՛ր և է Գաղափար կամ
 Նիւթ, որ կարենար արդարայնել իր գոյութիւնը : Մէջը բաց խօսքեր
 գտնուած ամէն գրուածք չկրնար երբեք արդիւնք հաշակուիլ մերկա-
 պարանոց դրականութեան, և հետևարար դատապարտելի գտնուալ, ար-
 ժանի գայթակղութեանը և պժգանքին՝ ընթերցող հասարակութեան :
 Բժիշկը, հասնելու համար իր բուժիչ նպատակին, պէտք ունի մերկացնելու
 իր զննութեանը ներկայացուած մարմինը կամ անոն, իր ամէնէն քօղամերկ
 մանրամասնութիւններուն մէջ, մինչև ամէնէն թաքուն ու ամօթալի
 գաղտնիքներուն խորը, գիծերը կտօ՛ւ միայն կրնայ ան թափանցել վէր-
 քին կամ անոն գաղտնիքին և գլուխ հանել իր բուժիչ դերը : Գրագէտն
 ալ, իրականացնելու համար թաքուն գաղտնիքներու, կրքոտ յուզումնե-
 րու, մարդկային կամ քնկերային խոր վէրքերու վերլուծութեան իր դերը,
 պէտք ունի քննելու և պատկերացնելու իրերը և երեւոյթները իրենց
 ամէնէն մերկացած վիճակներուն, գիծերուն, կտրկտոներուն մէջ : Եւ
 ատանկ ըրած ըլլալուն համար՝ չկրնար երբեք իր գործը դատապարտե-
 լի նկատուիլ, իրաւունք տալով գայթակղութեան : Գործին ոգին է
 կարեորը, ո՛չ թէ ձեւը, և զա՛յն նկատելն է էականը : Եթէ դրագէտը՝
 իր Նիւթին և գրական Նպատակին համար՝ պէտք ունեցած է քօղամերկ
 էջեր քրքրելու, իր գործը չը՛ կրնար դատապարտելի մերկապարանոցը
 հաշակուիլ : Բայց եթէ առանց Նիւթի մը և Գաղափարի մը գոյութեանը,
 գրուածքը աննպատակ նկարագրութիւն մըն է գրգռիչ տեսարաններու,
 անցքերու, պատկերներու [տ՛ն *pornographie*], արդէ՛ն տեղ չունի ան
 դրականութեան մէջ : Հիմա, պէտք է ճշդել թէ՛ Զօլաի ըրած գրա-
 կանութիւնը լողազրութիւնն [*pornographie*] է, թէ Արուեստին, Նիւ-
 թին, Նպատակին պահանջքը ևզող մերկապարանոցը : Իր գործերը, մե-
 ծապէս պերճախօս են՝ վկայելու խոր Նպատակի մը գոյութիւնը և ձգ-
 տումը, որոնք հիմնական սկզբնական ոգին իսկ կը կազմեն Զօլաի ար-
 տադրութիւններուն, և որոնց անունով է որ ան գրիչը հպեցուցած է քնկե-
 րաբանական և մարդկային ամէնէն խոր վէրքերու, երեւան հանելով
 մարդկային կիրքերու, յուզումներու և արարքներու ամէնէն չարաւատ,
 անլուրի ու գարշեցուցիչ կողմերը և գտնոնք պարզելով մարդկութեան
 աչքին առջև, անոնց թունալից արշաւանքն և աղետալի արհաւիր-
 քէն ամբողջ խորշեցնելու խորապէս մարդկայնական նպատակին ու խ-

տով : Նաևան չը՝ զրգսեր . կը պէգայնէ , կը խորչեցնէ , կը սոսկացնէ ընթերցողը՝ ապականութենէն : Ահա գաղանիքը արուեստին և յաջողութիւնը ստանձնուած զերին : Նոյնը Զօլաի միւս լուրը գործերուն համար : Զօլաի ամբողջ գործը՝ պատկերն է մարդկութեան ապականութիւններուն , նկատութիւններուն , այլասերումներուն : Այդ գործը արդիւնք չէ՝ զիպատեան չատախօսութեան մը , այլ նպատակաւոր , ծրագրուած , ուսումնասիրուած հսկայ աշխատութիւն մը , յղացուած այն բարձր ազանդով՝ որ Զօլանն է , և պատկերացում , վրձնուած , կերպարանաւորուած այն հուժկու գրիչով՝ որ տէր է արուեստին ամէն զազանիքներուն և ընդունակ՝ մարդկային ամէնէն խուժուժ , վայրագ , արհարալի յուզումներուն և վիճակներուն նկարչութեանը : Իր Նիւթին համար , իր նիւթին բերումովը իսկ , անբարոյ տեսարաններու , կիրքերու նկարագրիչ մը եղած է Զօլա : Անբարոյական գրականութիւն տէք է հոչակել ուրիմն իրը : Ահա՛ մոլորութիւն և ահա՛ թէ ո՛ւր կը կայանայ խնդիրին նրբութիւնը . Զօլաի տիպարները՝ աղղիւնքն են այն միջավայրին , խորքերուն , ընկերային վիճակներուն , ուր իր գրիչը տարած է թաթխել , և ո՛չ թէ բռնազքօս սեղծագործութիւններ , ուսմանթիք երեւակայութենէ մը ծնած : Իր ստանձնած այդ զերին համար , որ զինքը կոչումին մէջ կը գնէ անբարոյ տիպարներով զբաղելու , անոնց հողին քննելու , ցաւերը , վէրքերը վերահասելու , իրաւացի կ'ըլլա՞յ անբարոյական հոչակել իր գրականութիւնը , այն խմատով՝ որով կ'ըմբռնուի բողբաղութիւնը եւ որով ճանչցնել ուղած են հոչակալ վարպետը Իրապաշա Դոլորցին : Անբարոյ տէք է հոչակել ուրիմն վիճակներուն ախտերու բժշկ մը՝ որ ազտեղի տեսարաններով , արարքներով և ախտաւոր ու ապականած անձերու վէրքերովը կը զբաղի : Անբարոյ տէք է հոչակել նաեւ այն հեղինակը՝ որ զիջութենէ զգուշացնելու համար պատանիները՝ կը խօսի զիջագործ տիպարներու , զիջութեան նախճիրներուն . ու արհաւիրքներուն վրայ , ա՛յն տեսակ քօղամերկ նկարագրութիւնով մը՝ որ տահանջքն իսկ է իր նիւթին : Ո՛չ , անբարոյ չե՛նք անուանել զայն , որովհետեւ հո՛գ է յաջողութեան զազանիքը անոր ստանձնած զերին և որովհետեւ ի՞նչ աւելի բուժիչ , ազդու , բարերար , արմատական՝ զիջութենէ խորչեցնելու համար տղան՝ քան նկարագրութիւնը—եւ մերկապարանոց նկարագրութիւնը—զիջութեան արհաւիրքներուն : Մտածե՛լ . ի՞նչ բանով կը տարբերի Զօլաի գործը . զերի եւ նպատակի նոյն գիծին վրայ չե՞ն դանուիր : Արուեստը իր պահանջները ունի , և արուեստագէտը հարկադրուած է հպատակելու անոնց , մոռնալով պայմանագրականութեան , նախապաշարումի եւ պատշաճութեան ամէ՛ն նեղմիտ նկատումներ : Ատո՛վ միայն կրնայ յաջողիլ ան : Գրականութեան մէջ , երկու բաց խօսք կը վերաւորէ փափուկ ականջները և կը գայթակղեցնէ պարկեշտատուն միտքերը : Ինչո՞ւ նկար մըն ալ , որ զիցուհի մը կ'առ

չատուածի մը անուշով՝ կը ներկայացնէ ամէնէն մերկ մասերը մարմինին, չգայթակղեցնէր եւ շատ անգամ կը զարդարէ զատերը ա՛յն տեսակ աւազներու, ուր չներուիր համայնի վրայ խօսիլ: Յունական եւ Հռոմէական քանդակագործական եւ նկարչական արուեստին մէջ, կը վխտան զանազան ժամանակներու բարքեր ու տիպարներ ներկայացնող գործեր եւ հրաշակերաններ՝ որոնք կը ներկայանան՝ այն տեսակ ագա մային մերկութիւններով, ուր Ագամի թղենիի տերեւն ալ կը պակսի, մարմնին ամէնէն ցոյցն անդամները ծածկող: Եւ սակայն, անոնք ո՛չ մէկ ասեմ, եւ, ո՛չ մէկ կերպով անբարոյական կամ անբարոյացուցիչ գործեր նկատուած են, ըլլալով արուեստի արտադրութիւններ՝ ժամանակին բարքերը եւ տիպարները ներկայացնող՝ որոնց կերտումին մէջ, արուեստագէտը երբեք չէ՝ մոտատանջուած ձերկին դադափարովը, անապով միայն Արուեստին պահանջքին: Իր միտքը չէ՝ իսկ պահ մը վրդովուած յօռի կողմովը գործին, որովհետեւ անոր կոչումն է եղած՝ Արուեստը ցուցանել, Գաղափար մը մարմնացնել լոկ, եւ ո՛չ թէ բարոյականի դաս տալ: Եւ այդ գործերէն ո՛ր եւ է մէկով՝ իր աւազը զարդարել՝ ճշմարիտ պարծանք մը պիտի ըլլար մեր ա՛յն բարոյամոլներուն, որոնք կը գայթակղին բաց խօսքի մը ամէնէն անմեղէն: Անո՛ր համար այս հակասութիւնը՝ որովհետեւ սխալ ըմբռնուած է բարոյականը, եւ, Արուեստին հասկացողութիւնը, անոր կոչումին, դերին խոր ճանաչողութիւնը կը պակսի: Այդ ըմբռնումը գայթակ, չեղած է իր ճշմարիտ մեկնակէտէն, եւ հասարակութիւնը՝ անպատճառ բարոյականի քարոզչութիւն մը, առաքելութիւն մը կ'ուզէ գտնել ամէն գիւրքի մէջ, ըլլա՛յ ան գործ մը՝ որուն կոչումը, նուազագէտ հիմնովին ուրիշ ծրագրի մը ձգտի, արուեստի էջ մը մարմնացնել միտի: Յետոյ, ի՞նչ է Բարոյականի այն ըմբռնումը, հասկացողութիւնը՝ որ շատերուն ամէնէն նուիրական դաւանանքը կը կաղմէ եւ որուն պահպանումին ա՛յնչափ նախանձախնդիր կը ձեւանան: — Նախապաշարում մը: — Է՛ն պատուախնդիր ու մաքրակրօն անդամներով լեցուած տունի մը մէջ, չնիկ մը կը չրջագայի իր արական կամ իգական անպատկառութիւններուն բոլոր անդադոնապահ մերկութեանը ցուցադրութիւնով: Է՛ն մեծէն է՛ն պզտիկը գայն կը դիտեն, կը գրկեն, կը շոյեն եւ կը չօչափեն ամէն կողմով, ամէ՛ն աչքերու առջեւ: Եւ մէ՛կը չխրաչիր այդ արարքէն Բայց գայթակղութիւնը մեծ կ'ըլլայ՝ երբ սիրաբանութեան անմեղ միջազգայ մը կը պատմուի: Նախապաշարում չէ՛ նաեւ որ՝ քիչ մը քօղամերկ գրուածք մը կ'արգիլեն ծնողքներ կարգալ իրենց գաւախներուն, մինչ անոնց արգիլուած չէ՛ երբեք՝ կարգալ չին կտակարանէն ա՛յն տեսակ էջեր, որոնց անհնար է այսօր արատաւումը, որ եւ է լեզուով որ եւ է թերթի մէջ: Նախապաշարում չէ՛ նաեւ այդ Բարոյական ըսուած խրատելակր անո՛վ որ՝ ամէնէն ազատամիտ ամուսինը՝ չնեղեր իր կնոջ՝ որ մարմնին որ եւ է մէկ կողմին մերկութիւնը

յուցադրէ օտարին , մինչդեռ , ծննդաբերութեան մը կամ պարզ հիւանդութեան մըն ու պարագային , Բարոյականի հովով ուսած բոլոր առաջատաները ամբար կ'իջնեն , և բժիշկը , ամուսինին ներկայութեանը , ձեռքով ոտքով խառնշտակելու կ'ելլէ կնոջ մարմինն այն նուիրական մասը , որուն վարագոյրը ճեղքել չե'կ հոգի մը միայն ներուած է : Երեւակայե'լ զաւելշտական կողմը այդ Բարոյականին , երբ . . . բժիշկաները կրնան փոխուիլ անհուն թիւով : Նախապաշարուած չէ , նորէն , որ , ամէնէն համարձակաւք ծնողքներ՝ ահա որ կերպով կը գայթակղին , երբ երիտասարդ մը՝ իրենց ներկայութեանը , խորհրդաւոր ակնարկ մը կը սեւեռէ իրենց աղջկան , կամ , ուշադրաւ կերպով մը կը հոյի անոր մէկ կողմին , մինչդեռ , նորէն իրենց ներկայութեանը , քիչ ետքը , պարի կօշի մը միջոյն , իրենց աղջիկը կը թօր բազուկէ բազուկ , ամէնէն զիրկնդխառն ու շփումաւոր ձեւերու մէջ , և անոնք անտարբեր ու ներողամիտ հանդիսատես կը դառնան , աւանց գայթակղութեան ո'ր և է նշանի մը , ընդվզումի ո'ր և է խլրտումի մը , կամ սրտնեղութեան ո'ր և է ցոյցի : Նաեւ , Բարոյականի չը հակասեր , — օհ , ահա ո'ր հեղնութիւնը , չը՝ հակասեր , — երբ մայրեր՝ առանց երբեք պարկեշտութեան , հակառակած բլլալու զգացումէն վրդովուելու , աղջիկնին ամուսնութեան ներկայացնելու ա'յնչափ վարպետ միջնորդութիւններու հեղինակ կը դառնան երիտասարդներու մօտ , կամ երբ կիներ ու աղջիկներ , ամուսնուն ու տաքին պատրուակով , թեւով կուրծքով աղւո'ր մը կը բացուին , ամէնէն մերկ ու հեշտախտիկ կերպով գրգռիչ կուրծքերը շինել յուցադրելով , կենդանի , ցցակարկառ , թրվառն , ամէն մէկ քայլի խաղացող՝ իրենց մեղկ քնքշութեան բոլոր զլիխիչ զխիթանքով և իրական զիծերու խողտիչ անաքող պատկերով : Ի'նչ կ'ըսեն այդ կուրծքերը : Ո՞ւր է Բարոյականի սահմանը . ի'նչ բան կը սահմանադէ զայն , ի'նչ , բայց եթէ Նախապաշարումի պատուարը , որուն գագաթները կը ծրարուի երեւոյթները փրկելու , աւանդութիւնները տես զը տանելու , սովորամոլութիւնը նուիրագործելու խորհուրդին՝ մէջ : Ահ , ո՞ւր է ճշմարտութիւնը . ի'նչ է այս երկսայրիութիւնը . կամ մէկը , կամ միւսը :

Զօլտի զրականութեանը , անձին ու անունին ալ զէմ եղած անխմտ նախապաշարումի մը և իր գործին յոռի մեկնութեանը արդիւնք են ասան ասան յայտնուած գայթակղութիւնները , որոնք տ'լ աւանդական դարձած են : Զօլտի անունը երբ կը տրուի , բարոյամոլները պէտք են գայթակղիլ , շատ անգամ աւանց զխնալու թէ ինչո՞ւ : Հասկացողութեան պակաս և մեկնաբանելու , վերլուծելու թերի մը՝ որ չարունակ կը մոլորեցնէ դատաստանը ա'յնչափ չափերու : Այդ անհասկացողութիւնը Զօլտ ինք կ'ուսումնասիրէ ու կը լուսաբանէ իր Թեոդիկ Ռասիէն վէպին նոր մէկ հրատարակութեանը աւաջաբանին մէջ , որ լուս

պատասխան մըն է՝ ընդհանուր առումով՝ իր բոլոր գործերուն վրայ
 եղած միայն դատաստաններուն և ուր պերճախօս կերպով կը յայտնուի
 թէ՛ ինչպէս քննադատներ, նոյն խի օտար քննադատներ, կը վրիպին
 ճշգրտապէս թափանցելէ Զօլաի գործին իրական ոգին, և մօլար մեկ-
 նութիւններով հեղինակին նպատակը խելաթիւրուած կըրակայու թիւն-
 ներով կը կնքեն, եղծելով արժէքը և ձգտումը ա՛յնչպիսի խնամքով մէջ-
 տեղ հանուած աշխատութեան . — « Թեռեզ Ռաֆէնի մէջ, ուղած եմ
 ուսումնասիրել, — կը գրէ Զօլա, — խառնուածքներ և ո՛չ թէ նկա-
 րագիրներ : Ատոր մէջ կը կայանայ գիրքէ ամբողջ ոգին : Ընտրած
 եմ գերազանցապէս իրենց ջիղերուն և արիւնին իշխանութեանը տակ
 գտնուող անձնութիւններ, զորի անձնիշխանութենէ [*libre arbitre*],
 իրենց կեանքին ամէն արարքներուն մէջ կառավարուող իրենց միայն
 նախասահմանութիւններէն : Թեռեզ և Լօւան մարդակերպ անասուններ
 են . ուրիշ ոչինչ : Ուղած եմ հետեիլ, քայլ առ քայլ, այս անաս-
 ւուններուն մէջ, կիրքերու դանդաղ գործին, լնաղղին զրգուններուն,
 ջղային տաղնաղի մը հետեւանքով առաջ եկած ուղեղային խանդա-
 րումներուն : Իմ երկու հերոսներուս արակցութիւնները՝ զոհացումն են
 պէտքի մը . ոճիրը՝ զոր կը գործեն, մէկ հետեւանքն է իրենց հու-
 թեան, հետեւանք որուն կը մղուին՝ ինչպէս գայլերը կը մղուին ոչ-
 խաղերու յափշտակութեան . վերջապէս, ինչ որ հարկադրուած եմ իրենց
 խղճահարութիւնը կոչել, , գործարանային պարզ խանդարում մըն է,
 վրթելու աստիճան ձգտուած ջղային դրութեան մը ընդլզումը : Հո-
 գին կատարեալապէս կը պակսի անոնցմէ . ճիշդ է ալ, որովհետեւ
 ասանկ ուղած եմ որ ըլլան : Կը յօսամ թէ՛ ասկէ կը հասկցուի որ՝
 իմ նպատակս ամէն բանէ առաջ գիտական նպատակ մը եղած է : Երբ
 ստեղծեցի երկու անձերս, Թեռեզը և Լօւանը, նպատակ բնորոշի
 ինծի՝ լուծել զանազան խնդիրներ. փորձեցի բացատրել արտասովոր միու-
 թիւնը՝ որ կրնայ առաջ դալ երկու տարբեր խառնուածքներու միջև .
 ցուցուցի խոր վրդովումները արիւնային խառնուածքի մը՝ որ չփումի
 մէջ դանուած է ջղային խառնուածքի մը հետ : Թող կարգան վէպը
 ուշադրութիւնով, եւ պիտի տեսնեն որ՝ իւրաքանչիւր զլուխը ուսում-
 նասիրութիւնն է հոգեբանական շահադրժու պարագայի մը : Մէկ խօս-
 քով, նպատակս սա՛ եղած է միայն . արուած ըլլալով կարող այր մը
 եւ անյազ կին մը՝ անոնց մէջ փնտռել անասունը, ուրիշ բան չտեսնել՝
 բայց միայն անասունը եւ մանրակրկիտ կերպով նօթագրել այդ էական-
 րուն զգայութիւնները եւ արարքները . . . : Խոստովանեցէք որ այս
 տեսակ ճշխատութեան մը նուիրուելէ ետքը, զժուար է ըսել մարդիկ՝
 որոնք քեզ կ'ամբաստանեն անպարկեշտ պատկերներ միայն նկարել ու-
 ղած ըլլալու միակ նպատակով » : Ահա՛ թէ ինչ պայծառ դատ մը կը
 խտայնէ Զօլաի մեկնութիւնը . պէտք է գիտել թէ՛ ինչ մեծ հետաւ է

րութիւն կայ՝ իսկական նպատակին մէջ հեղինակին գործին եւ այն հասկացողութեան մէջ, որով դատուած է երկը եւ կը դատուի շատ անգամ, գրեթէ միշտ, մանաւանդ բարոյամոլներու այն ամբօնէն՝ որ ամէն քայլին, ամէն տկնարկին առկ, ամէն արարքի մէջ՝ բարոյական մը անանկ կ'ըզձայ եւ կը փնտռէ գանկը: Զօլտի խօսքերէն ըլլող յուր գատումի այդ յայանութիւնը սեփական չէ՝ միայն Թեռեզ Ռախնի, այլ պարագայն է նաեւ գրեթէ իր բոլոր գործերուն: Նոյառապէս մօռնալով, ձեւին կառչելու, անով զբաղելու, զայն դատելու յաւիտենական վրէպը, դժբաղդ մոլորանքը:

Այս բոլորէն ետքը, տիրապետ բարոյամոլները առարկութիւն մը ունին նորէն, որով կը կարծեն ամէն իրատունք չահած ըլլալ. «Բոլոր այդ բուսածները ճիշդ ալ ըլլալով, կարելի չէ՞ որ, չը՞ կրնար ըլլալ որ՝ գրագէտներ հրաժարին զայնպիսի շիւթեր մշակելէ. ինչ լինա՞նք անոնց պակաս ըլլալէն»: Ահ, սակաւապէտ արամաբանութիւնը պարկեշտասուն հոգիներուն: Ատիկա պիտի նմանէր առաջարկելուն՝ հալածածայր գրական այն տեսակ գործերու՝ որոնք կրնան հրաշակերաներու արժէքը ունենալ: Fécondité մը, իր ընկերաբանական հակայ արժէքով, եւ Փրանսական ժողովուրդին կեանքին համար անհուն նշանակութիւնով, վտարե՞լ գրականութիւնէն, այդ դատաստանին համեմատ, անոր համար որ, իր նպատակին, օգիին, ձգտումին իսկ բերումով, մերկապարանոց էջեր ունի: Այդ սկզբունքով, անհունապէս սահմանափակել պէտք պիտի ըլլար գրականութեան հորիզոնը, չըջանակելով զայն նեղ կալուածի մը սահմաններուն մէջ: Գրականութիւնը աւրօն մը չէ՝, ուր միայն կը խօսին պարկեշտ շիւթերու չորքը, որոնց չըջաղիւծին դուրս ոտուած ընել ներքի չէ՝: Գրականութիւնը՝ կոչուած ըլլալով պատկերը ըլլալ մարդկութեան, զայն յուզող կիրքերուն, ինչպէս այն բարքերուն, միջավայրին եւ ընկերային ազդակներուն՝ որոնց անխարդախ արտայայտութեան դերը ունի, չկրնար կաշկանդուիլ նեղ հորիզոններու հեղձօքիչ չըջանակին մէջ, ուր անարիւն ու անկողմ կեանք մը միայն կ'ընայ թողբոյն: Այդ խեղդուկ մթնոլորտին մէջ՝ կը խառնին ան եւ գալկահար ծագիկներ միայն կրնայ արգասաւորել: Այդ կերպ յղացումով մշակուած գրականութեան մը մէջ՝ անհուն թերի մը կը մնայ Կեանքէն, պակասը Կեանքի մեծ մէկ էջին, էջը մութ խաւերուն, էջը խորհրդաւորին, — նման պակասաւորութեանը լուսանկարչական տախտակի մը՝ որ անտարանի մը միայն ամէնէն մօտաւոր մասն է առած, անթափանց ու անհաղորդ մնալով շուրջին եւ հեռանկարին աւելի կարեւոր մանրամասնութիւններուն՝ որոնցմով է որ տեսարանը կ'ամբողջանայ ու կ'արժէ: Այդ գրականութիւնը անհաւատարիմ ու կեղծ գրականութիւնն է, Կեանքին մէկ երեսը միայն նշմարել կրցող իր կարճատեսութեանը մէջ: Գրականութեան հորիզոնը պէտք է լայն ու արձակ սահմաններ ընդգրկէ: Պէտք է ազատ ոլորտներու մէջ թեւածի, ըլլալու համար ճշմարիտ, լիակատար արտայայտութիւնը Կեանքին ու Մարդկութեան, որովհետեւ անհուն են Կեանքին ու Մարդկութեան յայտակարարած երեւոյթները ու լիճակները: Հո՛գ է Արուեստին յաղթանակը: Եւ Իրապաշտ Արուեստը իրագործել յաջողած իր այդ դերով՝ մեծ իրաւունքներ ունի փառքի դափնիներու:

ՆՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԻՔԱՅԷԼ ՓԱՇԱ ՓՈՐԹՈՒԳԱԼ

a.

Մի՛խայել Փաշաի հրապարակային կեանքին վրայ հաբեւանցի ակնարկէ մը ետք, անդրադառնալով հիմա քիչ մըն ալ իր ընտանեկան-ընկերային կեանքին : Մեծ եւ նշանաւոր մարդոց աչքի զարնող քերուրիւններէն մէկը կ'ըլլայ իրենց մեծամտութիւնը, որով իրենցմէ զուրս ո'չ մէկ մեծ եւ բարձր անձ կը տեսնեն եւ արձամարհանով կը նային իրենց շուրջիներուն : Այս քերութիւնը չունեն Մի՛խայել փաշա — Հեզաճաւբոյր եր եւ յարգանով կը վարուէր այն ամենուն հետ, որոնք իրեն կը մօտենային. տեսակ մը անբացատրելի շնորհ կը փայլէր ա՛նոր անձին վրայ, բան մը՝ որ կը մեղմացնէր բնութեան կողմէ իր դժմին վրայ զծուած լրջութիւնը կամ խտութիւնը, ազնուութիւն մը՝ որ համակրելի դրած էր զինքը, առանց բան մը պակսեցնելու իր պատկառանքէն : Հաստատմիս եր՝ առանց յամառ մը ըլլալու, ինչպէս կը վկայեն զինքը շատ մօտէն նանչցողներ . մանաւանդ «երբ բանի մը խորը կենելով՝ իմանում էր նա նշուրքիւնը, պէտք էր որ իր ասածին իրայ հաստատ մնար» : Արդարաւոր եւ անաշու եր ան ուրիշի մը արժանիքը գնահատելու մեջ . չէր գիտէր ձեւմակին սեւ՝ սեւին ձեւմակը ըսել, հոգ չէր քե երական իր բարեկամը կամ բեճամին ըլլալ : Իր կեանքին ընթացքին մեջ՝ բաղդին աշակցութիւնը երբեք չէ վայելած, ոչ ալ մարդկային հմարհներ գործածած : Իր ձիրքերը, բարեմասնութիւնները, հաւատարմօրէն ծառայելու ջանքը եւ ժիր գործունեութիւնը լոկ եղած են զինքը բարձր դիրքի մը հասցնող : Անկեղծութիւնը իր շուրհին պէս իրմէ անբաժան էր . կրցածին չափով բարիք կ'ընէր, առանց սնոտի խոստումներու : Ամէն գործի մեջ իրեն առաջնորդ ընտրած էր խիղճը, եւ նպատակ՝ ուրիշներու օգուտը եւ իր անձին ստոյգ պատիւը : Վերջին աստիճան կարգապահ էր եւ չէր գիտէր գործ մը ձգձգել . նոյն բանը կը պահանջէր նաեւ իր ստորադաս պաշտօնեաներէն : Իր դրսեւորութեան դասելով՝ զոռոգ բնաւորութեան տէր մէկը պիտի կարծուէր, բայց ընդհակառակը՝ հեզաճաւբոյր, խոնարհ եւ զիջանող մէկն էր ան եւ գիտէր յարմարի պարագային կամ միջովայրին . իր այդ երեւոյթը ուրիշ բան չէր, բայց միայն «պարզապէս իր հոգիին վեհութիւնը մարմինին փոխանցուած» : Յուշեցնելու համար քե ո'ր աստիճան համեստ էր ան՝ նոյն իսկ իր բարձրութեանը մեջ, հետեւեալ մանրամասն մեջ կը բերենք : — Մի՛խայել Փաշա Բարիզէն Պոլիս վերադարձած միջոցին իր յարգելի դաստիարակ-աբբաճօր Բոլը իբր յիշատակ կը ձգէ անգլիերէնէն քարգմանուած փերուածներու պզտիկ հաւաքածոյ մը : Տարիներ կ'անցնին, Մի՛խայել մեծամեծ պաշտօններու զլուխ կ'անցնի . ամէն կողմէ իր անունը մեծ գովասանքներով կ'արձագանգուի . բայց

ինքն միտ լուռ կը մնայ, նոյն իսկ իր սիրելի Աբբահօր յիսնամեայ յոբէ-
եանին միջոցին : Վերջապէս օր մըն ալ հին յիշատակները կ'արժարծին
երկուսին ալ սիրին մէջ եւ Աբբահայրը՝ Միխայէլ Փաշաի վեզիրութեան
աստիճանին բարձրանալուն տուիրով, զեղեցիկ շնորհաւորական նամակի
մը հետ կը դրէ նաեւ իր ֆերուածներու զրոյկը : Անկարագրելի կ'ըլ-
լայ Փաշահին զգացած ուրախութիւնը եւ գողորիկ նամակի մը հետ կը
դրէ նաեւ իր լուսանկարը, ինքնին բաւական հետաքրքրական նամակ մը,
գրուած Պոլսէն, 27 սեպտ. 1894 բուականով, զոր նոյնութիւնով մէջ
կը բերենք. —

Միւսիկ Վարդապետ եւ Հայր ,

Ետ առի՛ իմ հին յիշատակս , որ այսուհետեւ ձեր նորը պիտի ըլլայ , ու փոխան ձեր հին
Միքայէլին կը զրկեմ նոր եւ հին մը , որուն վրայ ժամանակին եւ աշխատութեան նշանները
աւելի պիտի տեսնէիք՝ Թէ վարպետ լուսանկարի ձեռքէ անցած չըլլար : Ուրախութեամբ
տեսայ որ աւելոր տարիքն հոգեւանդն զիմացդ , — եւ որպէս յուսամ առողջութեանդ , — այ-
լայլութիւն չէ բերած : Ձեր փոքրիկ եւ սիրարուղիս զիրը մեծ հրճուանք պատճառեց ինձ ,
Թէպէտ աւելի երկայններն ալ միշտ ախորժով կ'ընթեռնում , երբ ատենս ներէ կամ մոռնալ
կարելի ըլլայ զնորկայն Յիշատակ (*) մ'ալ պատրաստած ունիմ , որում կը վկայէ եւ Աբբա-
հայր Տէրն , որ Թէպէտ զուգնաբեայ ինչ յնքեան , բայց երկար պարապմանց արդիւնը ըլ-
լալով , պիտի ցուցանէ Թէ ո՛րքան Ձեր եւ Միարանութեանդ յիշատակօր զբաղած է բազմա-
նայ լուծեան մէջ

Հիմաւորց աւակներդ

ՄԻՔԱՅԷԼ ՓՈՐՁՈՒԳԱԼ

Միխայէլ Փաշա՛ իր ունեցած բազմակողմանի հմտութիւնովն ալ ,
Ազգին մէջ հազուագիւս անձեռէն մեկն էր , եւ աս՝ կը կազմէ իր եր-
րորդ առաւելութիւնը : Թափանցող եւ սուր միտք ունէր . խօսակցու-
թիւնը յսակ եւ տրամաբանող էր . ձայնը հնչուն եւ զօրաւոր . ոճը՝
սեղմ եւ ախորժելի . դեմքը՝ վեհ եւ վարուելակերպը՝ ծանր : Այս ամենը
միանալով , խօսած պահուն , անզգայի կերպով , այն տեսակ հեղինա-
կութիւն մը կ'առնէր , անանկ մը կը դիւրեւ ունկնդիրը , որ կարծես
ուպուցիչ մըն էր՝ որ կը վարդապետէր եւ դեմինը սխալուած էր առա-
կեցի դէր առնէ : Մայրենի լեզուին պէս քաջ կը հասկնար , կը խօսէր
եւ կը գրէր բուրեւեռներ , անգլերէներ եւ ֆրանսերէներ . լեզուն ալ միտքին
նման՝ հիւսն եւ բեղմնաւոր էր : Իր սիրած մասնագիտութիւններն էին՝
սնտեսական եւ ելմական գիտութիւնները , որոնց մասին խօսող հեղինակ
եւ գիրք չկար՝ որ ծանօթ չըլլար իրեն : Տարիներով ուսուցչութիւն քրտ
է Իսլազիտութեան եւ Քաղաք. Տնտեսութեան՝ Կայս. Միւլիիյէ Վար-
ժարանին մէջ , ուր իր դասախօսութիւններով կրցած է ձեռնհաս պաշ-
տօնեաներ հասցնել Տէրութեան : Սակայն լոկ այդ գիտութիւններուն մէջ
չէր սահմանափակուած իր հմտութիւնը . հաւասարապէս տեղեակ էր

(*) Կ'ակնարկէ գրական աշխատութեան մը՝ Եղիշէի վրայ :

նաեւ իմաստասիրութեան եւ պատմութեան, օտար ազգերու գրականութիւններուն եւ բարձրաստիճան անձի վայել եւ կարեւոր ամեն ուսումներու եւ գիտութիւններու : Սուր, կտրուկ, իմաստալից տեսութիւններ կ'ընէր ամեն կարգացածին եւ յաճին վրայ, անանկ որ՝ ինչ գիտութեան մասին որ խօսէր՝ անոր մասնագէտը կը կարծուէր : Իր տունին զարդն էր ձօխ գրասունը, զոր պարծանքով կը ցուցնէր այցելուներու եւ ուր մասնաւոր դարաններու մէջ՝ կարգով եւ ճաշակով զետեղուած էին հազարի չափ զանազան նիւթերու վրայ խօսող հասոյներ, զորս մեկիկ մեկիկ քղրասած, կարգացած եւ ուսումնասիրած էր, ինչպէս ասոր աղոյցոյց կրնան նկատուիլ այն դիտողութիւնները՝ որոնք կը զսնուին անոնցմէ շատերուն յուսանցքին վրայ : Սակայն անոր գլխաւոր ուշադրութիւնը գրաւած էր մայրենի լեզուին եւ գրականութեան ուսումնասիրութիւնը, որ մինչեւ իր կեանքին վերջը՝ իր միակ սիրելի զբաղումը եւ ժամանցը եղած էր, իր ազատ ժամերուն մէջ : Այդ անխնայ եւ բազմաւեայ ուսումնասիրութեան արդիւնքն է իր միակ գրուածքը՝ եզրիւնի մասին, զոր ժառանգութիւն ձգած է Ազգին բանասերներուն : Խնամուած ուսումնասիրութիւն մըն է ան՝ նիւթին ենթակայ դեմքին վարքին եւ գիրքին վրայ, ուր հեղինակը ցոյց կու տայ իր բովանդակ հմտութիւնը եւ ուր կը ներկայանայ նաեւ իր լեզուաբան, պատմագէտ, բանասեր եւ կրօնագէտ : Այդ մեծ աշխատութեան համար պէտք եղած ամեն միջոցները ձեռք բերած էր ան, — գիրք, բառարան, աշխարհացոյց եւ հնդիկ ու պարսիկ կրօններու վրայ խօսող գիրքեր : Միեայել Փաշա՝ հմուտ բլլալով նաեւ պարսկերէն լեզուին եւ Պարսիկներու Դ-ն դարուն կրօնական եւ հաղափական պատմութեան, — որոնք աղերս ունին իր ուսումնասիրած նիւթին հետ, — բնականաբար ամենէն ձեռնհաս անձն էր այդ աշխատութեան : Միեայել Փաշա Փարբուզալ մեռաւ 1897 Նոյեմ. 23 ին, ձգելով հմուտ գրագէտի, իմաստուն պատճօնասարի եւ ազնիւ ու վեհագի անձնաւորութեան մը անմոռաց անունը եւ յիշատակը : [Վ.Երջ]



“ՊԱՐԱՐՏ ՄԷԿ ՏԵՂԻՆ”

[ԳՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ]

«Մէկ խօսքով, սապէս կրնանք որակել Պ.Շարմօլիւն, իբր զրոյ ու իբր խորհոյ՝ միջակ խմայականութիւն մը՝ որ սակայն չառ ճարտար է՝, անդարգ մեծամասնութեան քով յաջողութիւն ձեռք բերելու մէջ. զրիթէ սարրական զգայնականութիւն մը, պզտորած մանաւանդ անտաշ ճաշակով մը, եւ իր արտայայտած հոգեբանական տախակութիւններուն արժանի ոճ մը։ Վերջապէս կարծեմ թէ զայն չենք կր՝որ դատակարգել ուրիշ տեղ, բայց եթէ այն վրայասաններուն մէջ՝ որոնց օխան քօան փարախ իջած է»։ Տակն ալ Պեկօնիս ստորագրած էր։

Երբ իր ընթերցածներ լինելուց, Շարմօլիւ լրագիրը դրաւ մարմարէ սեղանին վրայ. զայրոյթէն գունաթափ եղած էր, ըսելիք չի [՝] կար Սրճարանի իր ընկերները հարցուցին իրեն թէ ի՞նչ կը մտածէր։

— Թէ ինչ կը մտածե՞մ։ Ատիկա չառ պարզ է. երբ հանդիպում այդ տխրաբեր, բռն, ռսխ պիտի իջնամ իր պարսք մեկ տեղին։

— Օ՛հ։

— Այո, ոտքս պիտի իջնամ իր պարսք մեկ տեղին, ճշմարիտ կ'ըսեմ, եւ ան պիտի տեսնայ։

— Ձե՞ք ուղեր դատ բա...։

— Ոչ, թերեւտ նեղուիմ։ Ձեզի կ'ըսեմ թէ ոտքս պիտի իջնամ իր պարսք մեկ տեղին եւ ատիկա չառ պիտի չուշանայ։ Կ'ընդունիմ որ զիս քննադատեն, բայց չեմ կրնար հանդուրժել որ զիս նախատեն։

— Ձեր արհամարհանքովը պատասխանեցէք։

— Օ՛, չնորհակալ եմ, կուտ չեմ խտար արհամարհանքին։ Կ'արհամարհես եւ ան պարտքը կը վերսկսի ութը օր ետքը եւ դուն կ'անցնիր անմիտի մը տեղը՝ որ կը թոյլատրէ որ՝ յարգանքի պակասութեան մէջ գտնուին իրեն հանդէպ։ Եւ յետոյ, այսչափ խօսքը կը բաւէ։ Եթէ կը ճանչնաք Պեկօնիան, կրնաք կանխաւ խմայ առ իրեն, իբր որոշուած լինեցած բան մը. ոտքս պիտի իջնամ իր պարսք մեկ տեղին։

Ատիկա հազիւ վեց հոգիի առջեւ ըսուած բան մըն էր, եւ սակայն, իրիկուն, զրական բոլոր սրճարաններուն մէջ արդէն իսկ գիտէին թէ Շարմօլիւ ոտքը կոխի ելած էր, կամ աւելէ ճիշդ խօսած ըլլալու համար, Շարմօլիւն պատերազմական վիճակի մէջ էր եւ Պեկօնիան «պարսք մեկ տեղը» զգուշ կենալէ ուրիշ ճար չունէր։ Ոմանք կը հաւնէին Շարմօլիւն իրաւունք ունէր չը թողարկէ որ զինքը քաշկուտեն. եթէ իր տեղը ըլլային, իրենք իրեն պէս պիտի ընէին եւ ամէն կողմ Պեկօնիան պիտի փնտռէին, ընելու համար ինչ որ խմայաք արդէն։

Ուրիշներ կը քննադատէին։

[՝] Զիմքէ-Սարաւ միսականներու եւ յարաբերականներու մասին կը գետնի մերի-
նէն արքեր ուղղութեան մը, զոր իր փափակի գաւառայն անվոփոխ կը պահեն։
Խմբ. Ծում.

— Տէր-Աստուած, եթէ ատանկ ամենապղտիկ յարձակումի մը համար պէտք ըլլար բտրիւնալ և պտտախանել . . . ոտնամբարձ, ապա ի՞նչ անկարելի կը դառնայ : Ապահովարար, Շարժօլիւ պիտի մտածէ և հանգարտի :

Իսկ մէկ քանիներ բոլորովին դէմ կը խօսէին .

— Պարոն Շարժօլիւին ըրածը վերջին ատախճան կապիկօւթիւն է : Եթէ կրնայ թող մէյ մը մեղի դայ, իր ստքը մէկ պարարտ տեղերնուս զպցնելու և կը տեսնա՛յ :

Առաջին օրերուն, Շարժօլիւ իրաւոյնէ խղճամօրէն փնտռեց Պէկօնիան : Նարօլիթէնէն Ամերիքէն փութաց, Ամերիքէնին Քաֆէ Ռիշ և Ռիշէն ալ Բուսէին վազեց : Քարախնալին դիմեց, Պէկօնիա երևք չաքաթէ իվիր գացած չէր հոն : Ռէժանսին մէջ ալ տեսած չունէին զինքը, ոչ ալ ուրիշ տեղ : Հարցաքննուած անձերը փոխադարձաբար կը հարցնէին .

— Ի՞նչ ունիք ըսելիք Պէկօնիան :

— Օ՛հ, ոչինչ : Զինքը կը փնտռւմ, պարզապէս ոտքս իջնալու համար իր պարարտ մէկ տեղին :

— Վա՛յ սարսափելի :

Եւ խօսակիցը հետաքրքրութիւնով կը նայէր այդ ոտքին՝ որ այն ատեն միայն հանդիստ պիտի աւնէր, երբ վրէժը լուծէր Պէկօնիան : Արդ, դիտած էք սա տարօրինակ բայց սովորական երևութիք : Ամէն անգամ որ ոտք մը, վրէժխնդրական նպատակով մը շարժելով, պարարտ տեղ մը փնտռելու կ'ելլայ անոր բերնին չափը տալու համար ապահով կրնաք ըլլալ որ ընաւ հանդիպելիք չունի իր փնտռանին հազարաւոր զոյգ անմիտ պարարտներու պիտի հանդիպի, բայց սպասուած յետոյքին, երբեք : Որոշ օրէնք մըն է ստիկա, որ առաջ կու գայ սա յախտնական ու գերազանց օրէնքէն՝ որուն համեմատ ոչ մէկ բան պէտք է կատարուի, մահկանացուներուն փափաքներուն համաձայն : Այն ատախճան որ Շարժօլիւն ստքը պարապ տեղը տատկեցաւ, Պէկօնիա միշտ շարունակեց նստիլ սպառնալիքի տակ եղած մասին վրայ : Երեւակայեցէք որ Շարժօլիւ ընաւ վատ մէկը չէր, և ապահովարար պիտի գործադրէր իր սպառնալիքը . նմանապէս երեւակայեցէք որ Պէկօնիա, հաստարազուկ կտրիճ, պիտի կրնար պատասխանել հոմերական տիպոյով մը . երեւակայեցէք վերջապէս որ երկու կողմին բարեկամներն ալ, օ՛հ, քաղցրիկ բարեկամները երկու կողմին, որ և է վէճ մը դառնացնելու խիստ ատակ մարդիկ, կանխաւ լուր տուած էին քննադատին, որ իր կարգին վիշապանը կը փնտռէր, հինգ աղբար մը փակցնելու համար անոր : Բայց իրարու չը հանդիպեցան ընաւ : Շարժօլիւ, վեց չաքաթ փնտռուածէ ետքը, ալ սկսած էր ոչ իսկ խորհիլ անոր վրայ. նոյն իսկ երբ տեսաւ թէ իր մտերիմ բարեկամներէն մէկը իր կարգին ցիւր թաթ-

խուած էր Պէկօնիտի կողմէն, այն օրէն քիչ աստիճանական յարգանք մը արթնցաւ իր մէջը մարակիչ-քննադատին հանդէպ. այդ յարգանքը վերջնականապէս հաստատուեցաւ իր մէջը, երբ իմացաւ որ խմբագրական սրահին համախմբուելու մէջ, ճաշկերպով է մը հաւքը, գինիին ու թաշկերուն շնորհիւ աւելի ներողամիտ դարձած, յայտարարած էր «Թէ վերջապէս Շարժօլիւ ոննուած աշխատող մըն էր և դրագէտ մը որ գիտէր յաւել տմբոններուն սիրտը»։ Երբ այս դատումը իմացաւ, պարտաւանդը իմ շնամին զգաց որ կը թուշնային իր աջ սրունքին միանները. վար դրաւ իր զէնքերը և ներեց։

Երկու ամիսներ ալ անցան։ Երէկ, Պապեօի սրճարանին մէջ ձախաւերին մէկը դադափարը ունեցաւ երկու նախկին հակառակորդները իրարու ներկայացնելու։ Այդ պահը հանդիսաւոր եղաւ։ Որովհետեւ, եթէ Շարժօլիւ մուցած էր, բարեկամները, իրենք չէին մոռնար. իրենք միշտ պարարտ մէկ տեղին ուսուիք հարուածին աւանդութիւնովը կ'աղբէին և յոյսերնէն թուքերնին կը վազէր. . . Սրդէն իսկ սաքի ելած էին, միջամտելու համար, երբ կռուողներէն մէկը տկարանար. արագ ահաբեկներ փոխանակած էին, որոնք կարծես ըսել ուզէին.

—Վա՛յ անպիտան, հիմա իրար բլքտին պիտի։

Բայց բնաւ։ Շարժօլիւ իր լայնարաց ձեռքը երկարեց Պէկօնիտին և բարձրաձայն արտասանեց.

—Պարոն, շատնց իվեր կը փափաքէի ձեզ ճանչնալ։ Գրական խնդիրներու մասին համաձայն ելած չենք միշտ, բայց զիտեմ թէ դուք կը գնահատէք իմ ջանադրութիւնս, և իմ կողմէս ևս ալ լիովին իմ մեծարանքս կը մատուցանեմ քննադանիւձեր խղճամտութեան։

Կրնա՞ք երեւակայել թէ ներկաները ինչ զլուխ մը շինեցին։ Պէկօնիտ ինքն իսկ քիչ մը չփոթած կը մնար։ Եւ սակայն, սեղմեց երկարած ձեռքը։

—Անշուշտ, պարոն, և ոչ միայն կը գնահատեմ ձեր տաղանդը, այլ և կը նախանձիմ անոր։ Բայց զիս նախադաշարած էին ձեզի դէմ և բարեախրտ անձնաւորութիւններ կը այնգէին ինծի՝ իր թէ դուք օխ ունեցած ըլլայիք ինծի դէմ, նոյն իսկ ձեռք սպառնալիք ընելու աստիճան։

—Անարդ զրոգարտութիւն մըն է ասիկա, — աղաղակեց Շարժօլիւ աղչահար ունկնդիրներուն վրայ խորտա ահնարի մը պտըտցնելով, — և նոյն իսկ քիչ մը դաժան զրոգարտութիւն մը, անպզամ զրոգարտութիւն մը։ Եւ եթէ ըլլայ որ հանդիպիմ անոր որ այդ զրոգարտութիւնը ըրած է, վա՛յ իրեն, ոճիս պիտի իջնամ իր պարսքս մեկ Տեղիմ։

ԱՆՋԱՏ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Որչափ դժուար բան է չհասկցող միջավայրի մը մէջ ապրիլը: Եւրօք ալեկն օր, անեկն ժամ տեսնել սգիտութիւններ կամ ապշութիւններ, որոնք իրենց անգիտակից սգիտութեան յոխորտանքն ունին, որոնք իրենք գիրենք աշխարհի իմաստունները կը կարծեն, ասոնց հետ խօսելու, զաղափար փոխանակելու եւ խորին զաղափարներ յայտնելու միասնութիւնով մը արտաւանդաւոր ապուշ խօսքեր մտիկ ընելու հարկին տակ գտնուիլ, ասոնց՝ ֆեզիկ գերագնացութեան շին կամ յայտնի յաւակնութիւնը կամ արհամարհանքն տեսնել ու կրել, շփուով մէջ գտնուիլ անանկներու հետ՝ որոնք ըսածդ չեն հասկնար, միեւնոյն կը կարծեն քե իրենց ըսածը դուն չես հասկնար, շատ անգամ ինկզիմի իրենց հասկցնելու համար անոնց իմացական մակարդակին զիջանելու, իրենց լեզուով իրենց հետ խօսելու հարկադրուիլ. . . ահա՛ տանջանք մը՝ որ դիւրաւ տանելի չէ:



Մարդկային գործարանաւորութեան մէջ ասաց եկած խանգարում մը, հիշանդութիւն մը, շատ անգամ ինքնին կը դարձանուի, կը բուժուի, զարմանալի եղանակով: Այս տեսակ պարագաներու մէջ մենք ընդհանրապէս «բնութիւնը դարձանեց» ըսելով խնդիրը շուտով կը համարինք: Ահաւասիկ անխնայ բառ մը՝ սա բնութիւնը: Երբ բնութիւնը իմացականութենէ գուրկ, կոյր ուժ մըն է, ինչպէս սոխորաբար կ'ենթադրուի, անտանկի է անոր վերագրել այս տեսակ ինքնաբեր դարձանումներ, որոնց մէջ իմացականութեան մը դերը յայտնի կ'երեւայ: Մենք սովոր ենք իմացական կոչել այն երեւոյթները միայն՝ որոնք մեր գիտակցութենէն կախում ունին կամ գիտակցաբար տեղի կ'ունենան. ահա՛ մեծ սխալ մը: Մարդկային գիտակցութիւն կոչուածը մեր միտքին վրայ բացուած ենդ շուտանց մըն է միայն, ինչպէս կ'ըսէ Ե. Ռիշէ: Մեր գիտակցութիւնը շուրջ շուրջ մեր հոշտեան մէջ անցած դարձաններուն մեծագոյն մասնէն: Կայ սակայն մեր հոշտեան մէջ ենթագիտակցական մաս մը, մեր անգիտակից էսը, օժտուած իմացական ամէկ յսկոյթիւններով եւ ինք իր մէջ գիտակից՝ գործարանաւորութեան ամէկ ծախումովերուն մէջ անցած դարձանին, որ անմիջապէս՝ պէտք եղած կենսական գործութեան առաջնութեամբ՝ օգնութեան կը հասնի ուր որ պէտք կայ դարձանի եւ կ'իրագործէ այն ինքնաբեր բուժումները՝ զորս բնութեան կը վերագրենք: Զե՛ որ արիւնի շրջանի, մարտդոնութեան նման գործողութիւններն ալ, որոնք մեքենական կը համարուին, մեր գիտակցութենէն անկախաբար տեղի կ'ունենան, եւ սակայն այդ գործողու-

թիւներն ալ պարագային ու պէսին համեմատ կը կատարուին ա՛յն տե-
սակ իմաստն եղանակաւորումներով , որոնք անկարելի է որ կոյր մե-
քենականութիւնով կատարուած ըլլան: Այդ գործողութիւններն ալ իմաս-
տաբար վարողը դարձեալ մեր ենթագիտակցական եսն է :



Մարդկային զգայարաններուն մէջ շօշափելիքը ամենէն նախնականն
է. իսկ միւսները անկէ զարգացած կան եղանակաւորուած են : Աչքը՝
օրինակի համար , քերէս մարմինին այն մասն է՝ որ շոյսի աշխիւներուն
հսկումը կան շօշափումը զգալու ընդունակութիւնը ստացած է , եւ
ականջը այն մասը՝ որ ձայնի աշխիւներունը զգալու ընդունակութիւնն է
ստացած :

ՅԱՂԱ. ԳՍԶԱՆՃԵԱՆ

Հ Մ Ա Յ Ք Ն Ե Ր

Պատգները համեղ , սիրուն ,
Երբ պջրանով կը պահուրսին
Եանանց ու խիս տերեւներուն
Ճախ , ծփանուտ փունջին ետին .

Ալեակները ջիւն , երերուն ,
Օծուած լոյսին ցոլմովն յետին ,
Հորիզոնին զգը , եկան ,
Փախստական երբ կ'անհետին ,

Էմ մէջս՝ իրենց հմայներով՝
Խօլ բաղձանքներ կը կուտակին—
Ենչպէս քովը հոգեխառով

Աղաւթներուն տնտեսչելի՝
Եր նագանով կը փալփի
Շրջաբոցէ նուրբ փոխին տակին :

ՓԱՅԼԱՆ

ՔԵՐԹՈՂ

Օ'հ , ինչո՞ւ ըսի : «Այ ֆերպոյ չեմ ես» :
Ինչ դառն հայեցանք : Երբ վինի մը պէս
Սիրիս վրայ կ'զգամ գոլիայ սակեղէս ,
Երբ երջանկութեան տա՛ղը ինձ կ'երգես ,
Օ'հ , ես ֆերպոյ եմ . բընարի մը պէս
Հրճուանէի մասիս տակ կը նըւագես ,
Շրթունքը կ'այրի համբոյր-կըրակես ,
Ու կը զինովնամ ձայնէջ երակէզ . . .
Քերթոյ՛ եմ , աղաւթ , գայն կը պարտիմ բեզ :

[Նմանող.]

Ռ. ՍԵՒՍԱՆ

ՏՂՈՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ

Իրիկուն մը , աշխատելէ յոգնած , մեծ քարաշէն տունի մը անկիւնը , գետինին վրայ երկնցած էի : Մարը մանող արեւին կարմիր ճառագայթները դուրս յայտել կուտային պատին վրայ՝ խորունկ ճեխքառուքները ելլելու արատները : Տունին ներսը , գիշեր ցերեկ , մառանի մէջ զանազան մուկերու պէս , ազատ ու անօթի մարդիկ կը շարժուէին : Իրենց մարմինը , ցնցոտիներով ծածկուած էր եւ իրենց հոգին ալ լղրճուած էր մարմիններուն պէս : Տունին պատուհաններէն՝ հրդեհէ ելլող յամր ու թանձր մութի նման՝ հոն ներսը վժացող կեանքին միօրինակ ու խուլ աղմուկը կու գար : Տեսակ մը թմրութեան մէջ ընկղմած , կ'ունկընդդէի այս տխուր աղմուկը :

Յանկարծ , ճիշդ քովէս , պարագայ տակառներու եւ հին սնտուկներու մօտէն , անուշ ու փափուկ ձայն մը լսեցի որ կ'ըսէր .

Տ) so , պէպէս , so so ,
Պէպէք պիտի բնանայ քիչ աւելեւ :

Այս տունին մէջ , երբեք չէի լսած որ մայրեր իրենց զաւակը քնացնեն այսչափ դուրդուրանքով : Ուրի ելայ , առանց աղմուկի եւ տակառներուն ետին ակնարկ մը նետեցի : Մնտուկներէն մէկուն վրայ , պղտիկ աղջիկ մը նստեր էր , իր դանդաղեղ ու թուխ գլուխը հակած . աղջիկը հանդարտօրէն կ'երկարուր ու երազուն շեշտով մը կ'երգէր .

Տօ , so , պզտիկ պուպիկս ,
Մայրիկը պիտի գայ շուտով
Ու անուշեղէններ պիտի քերէ բեզի :

Իր պղտիկ , ազատու ձեռքերով՝ կարմիր ձորձով մը պլլուած փայտէ դղալի մը կոթէն լսեցի ինչ որ եւ իր խոշոր աչքերովը անոր վրան կը նայէր :

Աղւոր աչքեր ունէր , պայծառ , քնքուշ ու տխուր , աղօց քով հազուադիւտ եղող ակնթիւնով մը օծուն : Անոնց արտայայտութիւնը զրաւեց զիս , այնչափ որ ալ չհնամարեցի իր դեմքին եւ ձեռքերուն ազատութիւնը :

Աղջնակին գլխուն վրայէն մօխիւրի ամպերու պէս անցնող ճիւղեր կը լսուէին , հայհոյանքներ , գինովի քրքիջներ , լացեր : Շուրջը , ցեխոտ գետինին վրայ , ամէն բան կոտորած էր , փշրուած եւ մայրամուտ արեւին ճառագայթները կարմիր կը ներկէին սնտուկներու կոտորածները , տալով անոնց արհաւիրտ երեսիմը հսկայ կազմուածքի մը , որ քանդուած ըլլայ թշուառութեան անգութ ձեռքով :

Ակամայ , շարժում մը ըրի : Պղտիկ աղջիկը սարսափաց . զիս նշմա-

րեց և իր կատկածոս աչքերը սղաթիկցուց ու կատուի մը առջև դանդաղ մուկի մը պէս կծկուեցաւ : Ժպտելով կը զիտէի իր վախկոտ տխուր դէմքը : Շրթունքները ուժգնօրէն սեղմեց ու իր նուրբ արտեւանունքները դողացին . յետո՛ք տաքի ելաւ , աճադարկոտ եղանակով մը թօթնեց իր պատառտուն չրջազղեսաւ , որ հազիւ կը սրահէր իր նախնական վարդապոյն երանգը . իր սուղորիկը գրպանը դրաւ և յստակ , դողացող ձայնով մը հարցուց ինծի .

— Ինչ կը նայիս :

Հազիւ ասանդմէկ տարեկան բլլալու էր . նիհար , դողող էր . Ուղղակի ինծի կը նայէր և իր թարթիչները կը դողային միշտ :

— Է՛ն , ինչ կ'ուզես նայինք . . . չարանահից քիչ մը լսելէ ետքը :

— Ոչ, ինչ . . . զուարճացի՛ր . . . կ'երթամ կօր . . . պատասխանեցի :

Այն ատեն , քայլ մը առաւ դէպի ինծի , իր դէմքը խոժռեցնելով , խորչելով կարծես . ու բարձր , յստակ ձայնով մը ըսաւ .

— Ինծի հե՛տ եկուր . . . տասնընի՛ք ֆոքեկ պիտի տաս . . .

Նախ չհասկեցայ ըսածը . բայց սարսափելի բանի մը կանխազգացումովը սարսափի :

Մօտեցաւ ինծի . մարմինը ինծի փակցուց և ինծի չնայելով , սկսաւ խօսիլ , միօրինակ ու դաժան ձայնով մը .

— Երթա՛նք . . . վողոցները վաղվղելու փախաք չունիմ , մարդ մը վնասելու համար . . . ատկէ դատ , չեմ կրնար օղ դուրս ելլել . . . մայրիկիս սիրովը չրջազղեսաւ ծախեց . . . օղի դնելու համար . . . եկո՛ւր , երթա՛նք . . .

Քաղցրօրէն ու առանց բան մը ըսելու , ետ մղեցի զինքը , կատկածոս նայուածք մը նետեց ինծի , որ կարծես զիս չէր հասկնար : Շրթունքները՝ տենդոտ՝ կը դողային : Վերջապէս , գլուխը վերցուց և ուրիշ անգամ մը նայելով յստակ ու տխուր աչքերը մեծ մեծ բացած , ցած ու նեղացած ձայնով մը ըսաւ .

— Քիթ բերան մի՛ ըներ . . . կը կարծե՞ս . . . սղաթի՛կ բլլալուս համար . . . կը կարծե՞ս որ պիտի սպառամ . . . մի՛ վախնար . . . ասեմով իրաւ է . . . կը պոռայի . . . բայց հիմա՛ . . .

Եւ առանց վերջացնելու , անտարբերութիւնով մը թուքաւ :

Հեռացայ , սիրախ մէջ կրելով անբացատրելի սոսկում մը և իր տղու սրայծառ աչքերուն խռովիչ նայուածքը :

ԺԱՄԱԳԻՐՔԸ

[ԴՐԱՆԱՆՈՒՄԻՍՏԱՍԵՐՈՒԹԻՒՆ]

Բ.

Մեր Եկեղեցին իր հաստատութեան օրերուն մէջ, չափաւոր եղած է: Կարելի չէ որոշապէս գիտնալ թէ՛ Եկեղեցին այն ատեն ինչ տեսակ ժամակարգութեան մը կը հետեւէր: Սա միայն գիտենք թէ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրով, մեր Եկեղեցին ստացաւ ազատ կերպարանք մը և հետեւաբար կրնանք ենթադրել թէ՛ Ս. Գրիգորէ կը սկսի ժամաստացութիւնը՝ որ պարզ սաղմոսներգութիւն մը եղած պիտի ըլլայ՝ Յոյն Եկեղեցիին հետեւողութիւնովը: Ժամագիրքին մէջ Ս. Լուսաւորիչին կ'ընծայուի «Աստուած մեծ և հզօր» մաղթանքը՝ որուն համար կ'ըսեն թէ՛ Հռիփսիմեանց և Դայիանեանց մարմինները ամբողջութեամբ ժամանակ հոգերգած է: Ժամագիրքին մէջ Լուսաւորիչին ընծայուած յայտնի կտորներէն մէկն է՝ «Իսկ մեք փառաւորեսցուք»ը [հաւատոյ հանգանակին կնիքը]: Ասոնցմէ զատ «Օրհնեալ է մարգարտութիւն քո Տէր իմ» և «Աղաչեմ զքեզ» երկու աղօթքներն ալ Ս. Լուսաւորիչին կ'ընծայեն՝ եկեղեցական ժամանակադիրներ: Յայտնի չէ թէ ինչ լեզուով գրուած են այս աղօթքները: Լուսաւորիչի ատեն Յոյն դպրութիւնն էր որ կը տիրապետէր նոյն իսկ մեր Եկեղեցիին մէջ: Հայ դիրքը չկային և եղածներն ալ անբաւական էին դադարեցնելու արտայայտութեան: Չենք ուզեր հոս վճռական բան մը ըսել այս մասին: Կը սպասենք որ մեր կարողագոյն բանասէրները բացատրեն մեզի այս մտնքը կէտերը: Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչև Սահակ-Մեսրոպ [325 մինչև 439] հարիւր տարիէ աւելի ժամանակամիջոցի մը մէջ, եկեղեցական ժամակարգութիւնով զբաղողներ չենք ունեցած, միայն այս վերջիններուն օրով, գիրերու գիւտէն ետքը, Եկեղեցին բոլորովին նոր կերպարանք մը ստացած է և տսիկա անտարակուսելի էր: Թէպէտ Հայ գրականութեան այս երկու մեծ ջանքերը թարգմանութիւններով, հեղինակութիւններով մտած են մեր Եկեղեցին, բայց ժամակարգութեան մէջ մեծ բաժին մը չունին: Ս. Սահակ գրած կարգադրած է 1. Քահանայօրհնեմը, [յետ ԻԱ. ամի արքեպիսկոպոսութեան իւրոյ]: 2. Քահանայարարի կանոնին վրայ [որ ի Նիկիոմիդիոս քաղաքի, Եփրեմի ասորւոյն էր արարեալ և զայն երեւ Ղազրիկ թարգմանիչ յետ Բ. ամի հայրապետութեան Ս. Սահակայ] աւելցուցած է ինչ ինչ մասեր: 3. Աշխարհական Թաղոյնի կանոնը [որ արար ի վկայարանս Ս. Հռիփսիմեանց]: Ս. Մեսրոպի ընծայուած աղօթքներ չկան ոչ ժամագիրքին և ոչ ալ Մաշտոցին մէջ: Թերեւս Ս. Մեսրոպ ունեցած ըլլայ թարգմանութիւններ որոնք անձանօթ ըլլան մեզի: Հոս թէ և ժամագիրքի մեր ուսումնասիրութեան գիծէն դուրս, բայց

ուչադրաւ զիտողութիւն մը կ'ուզենք անգամ մըն ալ կրկնել և յանձնել բանասէրներու ուչադրութեան : Մաշտոցը, եկեղեցական կարգերու և կանոններու այս ընծայարանի կարգադրիչը զրեթէ տակաւին անձանօթ կը մնայ մեզի : Իբրեւ, Ս. Սահակն է որ առաջին անգամ շարագրած է Քահանայօրհնեմը, Քահանայարարը, Աշխարհական Թաղաւմի Կանոնը, որով առաջին հիմնադիրը եղած է Մաշտոցին՝ որուն կարգադրիչը կը նկատեն նաև Ս. Մեսրոպը՝ քանի մը եկեղեցական ժամանակագիրներ : Սակայն կարծողներ կան թէ եկեղեցական այս մատեանը իր անունը առած է Մաշտոց Կաթողիկոսէն [899] : Այս կարծիքը կը հերքեն սա ստուգարանութիւնով . «Մաշտոց» անունին ծագումը յունական է , Մասդոն* որ Յոյներէն Ս. Մեսրոպի տրուած է իրր պատուանուն , ինչպէս նաև դարձեալ Յոյները կը կոչէին զինքը Ափիւքսիքոս և կամ ակոնալիս* որ նշանաւոր եկեղեցականներու տիտղոս մըն էր : Հետեւաբար «Մաշտոց» անունէն դատելով , կ'ըսեն թէ՝ կարելի չէ Մաշտոց կաթողիկոսին [899] առկ համանուն մատեանին առաջին կարգադրիչը ըլլալու պատիւը :

Ասկէ զատ հետեւեալ զիտողութիւնն ալ շատ ուչադրաւ է . «Մեսրոպի ըսն անունը յայտնի չէ . Մեսրոպ և Մաշտոց անունները պատուանուններ են . Մեսրոպ աշխարհական պատուանուն՝ որ պարսկերէն բառ մըն է և կը նշանակէ ֆարսուղար և հաւանօրէն տրուած է իր առաջին պաշտօնին համար , քանի որ զիտենք թէ աշխարհականութեան ատեն քարտուղար էր . իսկ Մաշտոց եկեղեցական պատուանուն՝ ինչպէս որ բացատրեցինք քիչ մը վերը : Այսպէս կամ այնպէս, կը տեսնենք թէ Ժամագիրքին մէջ ո՛ր և է բաժին մը ունեցած չին ոչ Ս. Սահակ , ոչ ալ Ս. Մեսրոպ և հետեւաբար պէտք կ'ըլլայ քիչ մըն ալ առաջ երթալ , մինչև [490] Յովնան Մանգակունի, որ Ժամագիրքի կանոնաւորութեանը և ճոխացումին առաջին աշխատողը եղած է : Ժամագիրքին մէջ Մանգակունիին հեղինակութիւններն են . «Զարթուցեալքս» ծանօթ քարոզը՝ որ գիշերային ժամերգութեան ատեն կ'երգուի , «Զքէն Գոհանամք» հոգեբուզի աղօթքը : Այս երկուքը թէև աւելի ճոխ և գերազանց , սակայն յոյն մաղթանքներու հետեւողութիւնով զրուած ըլլալու դրոշմը ունին իրենց վրայ , որոնց նմուշները պիտի տանք իր կարգին : Յովնան Մանգակունիին զրիչին արդիւնքն են նաև Մեծ Պահքի ճաշուններու երեք քարոզները , իրենց աղօթքներով : Ասկէ պիտի հետեւցնենք նաև թէ՝ Ժամագիրքին մէջ «Ճաշու Կանոն»ին կարգադրիչը եղած է Մանգակունի Կաթողիկոսը : Անցողակի կերպով բռնք նաև թէ՝ Մաշտոցին մէջ Մանգակունիին կ'ընծայուին Մկրտրեան Կանոնը, Խաչ Օրհնեցող , Պաակի , Եկեղեցոյ Հիմնարկիքի և Աւագանի Օրհնարքները : Ասոնցմէ զատ «Պատարագամատոյց»ին մէջ իրեն կ'ընծայեն ինչ ինչ աղօթք-

* Պատուանուն եկեղեցականներու , ինչպէս մեր հիմաւորան գերապետ , գերշարգեղէ տիտղոսները :

ներ ու քարոզներ, որոնք սակայն վաւերականութեան գրոշմ չեն կրեր։ ժամագիրքի տառջին մեծ կարգադրիչներէն մէկը կը հանդիսանայ մեզի Մանգալունի Յովհաննէս Կաթողիկոսը՝ որուն գրած ժամակարգութիւնը տեւած է մինչեւ Խոսրով Կարդ։ Անձեւացի, քանի որ իր Մեկնութիւն ժամագիրքի անուն կրկնաթիւեան մէջ չյիշեր որ և է ուրիշ ազօթք կամ քարոզ՝ հեղինակութիւն ուրիշ որ և է եկեղեցական մատենագիրի։ Յարմար ասեմին թողլով Անձեւացիի Մեկնութիւն ժամագիրքի հեղինակութեան վրայ խօսիլը, ըսենք անմիջապէս թէ՛ այսօրուան ժամագիրքը չճանչցուելու աստիճան՝ փոխուած, կերպարանափոխուած է, մանաւանդ յետնագոյն դարերու մէջ և դեռ 100-150 տարի առաջ փորձած են անհամ և անճշտ կրուածքներով ծանրարեանել այդ նուիրական մատեանը։ Հոս առաջ կը բերենք 1772 թուականին Պոլիս տպագրուած ժամագիրքին մէջի Աստուածածնի ածնախմբութիւններու յատուկ և Շնորհալիի Առաւօտ Լուսոյն հետեւողութիւնով գրուած երկ մը։

Աստուածմին Մայր Քրիստոսի .
Իմ յոյսն դու առուր մեծի .
Բարեխօս բնդունելի .
Քրիստոս քեւ մեզ ողորմեսցի .
Տէր ողորմես, Տէր ողորմես, Աստ. իմ բարեխօսես :

Խաւարն եւ մութն ինձ հանգիպի . .
Խառնիմ ի դառն ձախակալմի :
Ծրփիմ ի մէջ մեղաց սրգմի .
Յիշեմ զգործս իմ զազալի : Տէր ողորմես :

Յանկարծակի ման հանգիպի .
Մեղայ չասի Տեառն առաջի :
Նրմանեցայ ես Հրէի . և
Անորէն աւակերսի : Տէր ողորմես :
Յնծացայ եւ զուարնացայ ,
Յուխեցնից ուրախացայ :
Հիւանդ էի եւ ողջացայ .
Զտէրն յիշեցի ասի մեղայ . Տէր ողորմես :

Այս գրուածքը հաւանօրէն ժիշ գարուն վերջերը երգուած և տեղաւորուած է ժամագիրքին մէջ, առանց ո՛ր և է ժողովի մը որոշումին, կամ հոգեւոր իշխանութեան թողալուութեան։ Ասոր պէս խեղճուկրակ, անհամ և անճոռնի գրուածքներ տակաւին կան ու կը մնան Տաղարանի և Մայր Մաշտոցի մէջ, որոնցմէ հետեւեալ օրինակները հետաքրքրութեան համար հոս մէջ կը բերենք, պարզապէս ցոյց տալու համար թէ քմահաճոյքը ի՜նչ համեմատութիւններ առած է մեր նուիրական մատեաններուն մէջ։

ՈՂԲ ՀԱՄԹՈՒՆ ՆՆՋԵՅՅԵԼՈՅ — [Տաղարակեն]

Ես զիս դրի հազար տարու .
 Ղափիչ եկու օրս մահու .
 Զիս կու գտեմ ամեն բարու ,
 Կազիմ բարով բարեկամներ :

Երեկ ողջ էի այսօր մեռայ .
 Ու կարօս եմ շատ սիրելեաց .
 Շատ բան ունիմ անգործ մեծաց ,
 Կազիմ բարով բարեկամներ :

Հարիկ եկո դրանակա 'ի ներս
 Մարիկ եկո զիմ հույն տես
 Կրակ ընկեր արեկա իր ներս ,
 Կազիմ բարով բարեկամներ :

Բարեկամներս նրանք կու լան
 Զարակամս ուրախ են կու խնդան
 Բանաւայից ասէք որ զան
 Կազիմ բարով բարեկամներ :

Սրբունի Մարիամ միտ կոյս .

Զեզ բարեխօս լինի եւ յոյս

Ու զիս քաղէք 'ի մէջ հոգոյս

Երբայք բարով բարեկամներ :

[Հեղ. Առաքել Վարդ ի 1750]

ԴԱՆՁ ԵՐԵՆԴԵԱՆ. — [Մաշնոցեն]

Ե կուսն մահում .

Ծրնար մարմնացում :

Պատուեալդ 'ի մագուց .

Զմամ եւ պատում .

Զման քո գուշակում :

Ընտելալդ 'ի բազմաց ,

Անճամաղ բիրաց ,

Բանդը սերմանաց :

Եդեր հաց կենաց ,

Մարմնի զգեցում .

Հաց մեր փրկանաց :

Անա՛ ընկալ գերգա բանական

Բարեխօսութեամբ մօր քո

Ըղնակյան, աղաչեմ :

Մէջ բերումած այս օրինակներէն զիւրին է երեւակայել թէ՛ մեր եկեղեցական զիւրքերը ինչ տեսակ փոփոխութիւններ կրած են տակաւին , որոնք ոչ միայն ճշգրտած չեն՝ այլ և երբ պատահական ուսումնասիրութիւններու առինցից կը արտին այդ յետաժողովուրդները և սովորութիւնները , կարգ մը ազէտ գլուխներ պիտի կը համարեն այդ տեսակ տեսութիւն մը և զայն ստորագրողը անհաւատաւ [*] :


Հիմա տեսնենք թէ ի՞նչ էր Ժամատապութիւնը Յոյն եկեղեցիին մէջ և թէ ի՞նչ տեսակ մաղթանքներ նոյնութիւնով առնուած են Յոյն Ժամագիրէն :

ՅԱՐԱՌԹԻՒՆ ՄԼԸՏԻՉԵԱՆ

[*] Զարմանալի է որ Շարակսն եւ Ժամագիրք սոյոք վանքեր կամ կեդրոններ, բնաւ ուշադրութեան չեն առած այս երկու Մատեններուն գոնէ ծաւալը : Այս երկու գիրքերն ալ կարծես բնամանայի աւարակներ եղած ըլլան սպագրոցներուն համար : Զգիցցուիք թէ ի՞նչ նպատակով դրուած են Ժամագիրքին մէջ. Յարութեան, Ս. Հրեշտակացեաց, Մարգարեից, Ապաշխարութեան Ա., Համօրէն Առաքելոց, Համօրէն Ննջեցելոց, Համօրէն Մարտիրոսաց հարցերը իրենց բոլոր մասերովը . յետոյ ի՞նչ բանի պիտի ծառայեն Պատարագի Մասերը Ժամագիրքին մէջ՝ բանի որ ամբողջութեամբ չեն շարունակուած անոնք . աւելորդ չեն նաեւ Առաքելոց Դիմելեան եւ Առեւտրականներէն առնուած զուխները : Բոլոր այս մասերը երբեք առնչութիւն մը չունին Ժամագիրքին հետ . անոնք պարզապէս կը խնդրեն անոր պարունակութիւնը : Եթէ Վանքերը ազատ են իրենց ուղածին պէս շարելու, սպագրելու, գոնէ հո՛ւս , Կեդր. Կրօն. Ժողովը պէ՛տ էր ուշադրութեան առնել այս կէտերը , եւ աւելի կոնկրէտ ձեւի մը վերածելով արտօնէր անոր սպագրութիւնը , ինչ որ շատ աւելի կ'արժէ , քան եռանդանը ընդամենը խնդրելու համար եղած բանի եւ նպատակաւոր ջանքերը [1] : Ժա-

[1] Առաւանդի օրդրոյնը՝ մեր եկեղեցական երաժշտութեան մէջ՝ գնահատելի ձեւաւորակ մըն է , իր բարեկարգիչ ու առաջդիմական նպատակով :
 Խմբ. Ծան.

ժագիրքի երգերուն վրայ՝ անոնց երաժշտական ընթացքի ցայց տառայ խաղերն ալ լայնոր-
դաբար մեծ փոփոխութիւններ կ'ըստ են : «Յիշեցումք»-ը բազմեղանակ երգուածի մը
նման է , որոշապէս կը ցուցնէ թէ՛ որ աշխնան կարեւորութիւն կը տրուէր խաղերուն ,
ճնորհալիի տեսն :




Յետագայ դարերու մէջ սպառնաւ ժամագիրքերու մէջ ասոնցմէ՝ շատ քան պակսեց-
նաւ է՝ ինչպէս կը տեսնուի հետեւեալ օրինակէն .



Ի շէտցումք Ի զիշերի զա
Նո՛ւն քո՛ տէ՛ր :

Իսկ, վերջին տարիներու մէջ երուադէմ եւ Պոլիս սպաքում ժամագիրքերու մէջ
բոլորովին անտես առնուած է խաղերու կարգը՝ մօտաւանց Պատա Համբարձումի ձայնա-
գրութեան զիշէն ետք :



Հանդիմով կը ծանուցանենք թէ՛ այսօրոքնէ սկսելով , **Սարհանդակ** կը սկսի հրա-
տարալուիլ , իբր օրաքեր , իմ բազմապետութիւնով ծանօթ հրապարակագիր Տիգրան
Արփիարեանի , եւ աշխատակցութիւնով սիրուած գրագէտներու : **Սարհանդակի** խմբագ-
րական կազմակերպութիւնը եւ այս վաղեմի սիրուած օրաքերին վայելած համակրանք
ամէն վստահութիւն կը ներշնչեն թէ՛ ժողովուրդին սիրելի քերքն ըր պիտի ըլլայ , արժանի
ընթերցանութեան եւ հաշակութեան : **Սարհանդակի** յարատեւութիւնը ապահովուած
է դրամատէր անձնաւորութեան մը կողմէ , որ ստանձնած է նաեւ քերքին վարչութիւնը :
Ճնորհաւորելով մեր յարգելի պաշտօնակիցը , յաջողութիւն եւ լրագրական վայելուն առ-
պարէզ մը կը մաղթենք :

ԿԱՆԻԱՀԱՍ ԶԱՏԻԿ

Միտաք Մեծարեայ . . .
ըստած սագի փետուրի մը՝
որ կը կարծէ Թէ կրնայ Թու-
շիլ , որովհետեւ հովի պու-
տահական բմահաճոյք մը
գետնէն քիչ մը վեր ստած
է զինքը :

Պարոն Մեծա . . . միտ ,

Խեղ մը շողորթներ , որոնց մակարու-
ծութենէն զրակաւութիւնը ազատ չէ դժբաղ-
դարար , փաղաքեցին քեզ , բանաստեղծի
ձրի մակերիւնքով պճնեցին ու կարծեցիր Թէ
ալ եղար ըմբար . կարծիր հաւկիթի մը պէս
ցուցարիւղիկի մը մէջ նստեցար , երեսակայե-
ցիր Թէ՝ ակադեմական անաստուր , անմահու-
թիւնը բուզի է ալ : Եւ երբ կու գամ , Զա-
տիկէն ալ առաջ , հարուած մը իջեցնել հաւ-
կիթի ցցուող կլարութեանդ վրայ , չես հա-
կնար Թէ՝ ո՞ր տեղի կը ցաւի ու կը պոռաս-
կոտրած ծայրը վար կ'առնես ու յամառ աղու
մը պէս միւսը կը դարձնես , կարծելով Թէ
ստաւիւնը ջախջախողը միւսին առջև՝ պիտի
ընկրկի : Հաւկիթը հաւկիթ է սակայն , եւ
եթէ դուն չես ուզեր որ զոնէ մէկ կողմից
բաղդատական , երեսութեանդ տակնուծիւն
մը գէթ պահէ , մեղքը ճիտը , պարոնիկա .
tant pis pour toi !

Ես գործը քննադատած ատենս , որունու-
տին կեղծարարը ծայրած տեսնա , անձին
հետ գործ չունիմ . անոր համար կարծեր ես
որ «Փայլակ»ին զրիջին սուր ծայրը կոտրած
է , կոմը միայն մնացած է : Բայց եթէ այդ
սուր ծայրին խոյնոցը՝ անպատճառ հաշակել
կ'ուզես , այդ զիջողութիւնը կրնամ ընել քե-
զի բացատարար — քանի որ փափկանկա-
տութիւնը բարեւ տուած չէ քեզի :

Թուրք մեծ բանաստեղծ մը ըսած է Թէ՝
բուին աչքը անհանգիստ կ'ըլլայ ցարեկուսն
լոյսէն : Եթէ միայն դուն ըլլայիր այս առիւ-
րը կարողացողը , առկարող էր բանաստեղծի
մը մարդկրտը նետել տորբրուդ առջև : Բայց
ընծերցող հասարակութիւն մըն ալ պիտի
կարդայ այս տողերը և կրնայ հասկնալ Դուն
կուրցնող , շլացնող գովեստի , փայլալանքի
վարժուած էիր և քննադատութեան կիւս ան-

կեղծութիւնը ստամբոց կը խանգարէ : Բայց
արդէն քննադատութեան նպատակը սա է՝
անիկա կոչուած է խանգարելու համար այն
բոլոր ստամբոցները , որոնք չեն կրնար
մարտել : Կրնամ արդեօք յուսալ որ՝ մօր-
փիւնամուկի մը պէս այդ ցաւին հեշտանքին
վարժուած ես ու ձօժը աւելցնել կ'ուզես :
Չեմ կարծեր : Սակայն արուեստին սիրուն
պիտի ընեմ այդ բանը և հետաքրքիր եմ տես-
նելու Թէ՝ այս անգամ ինչպէս պիտի զգաս
ինքզինքդ :

Առաջին անգամ ըսի որ . . . «Ամէն մարդ
ազատ է հրատարակութեան մը վրայ իր
անկախ կարծիքները յայտնելու հրապարա-
կով» : Դուն կը կարծես որ ազատը կարողի
վիտիւտը , կրնա հեզնել այդ խօսքը : Սա-
կայն հշտարտութիւնները քննադատներէ շատ
աւելի անգում են , մանչուկս , և առիկա ալ
— որ Լարալիստն է — սրամտութեանդ խար-
խուլ սանդուղներէն վար կը նետէ քեզ , աւե-
լորդ առարկայի մը պէս , և խնամ տեղի
աղէկ չէ : Ես արամարանական յենակէտ
չգտայ ոտանաւորներուն տողերը զլսագիրով
չսկսելուց մէջ : Դուն յանուն արամարանու-
թեան ըրեր ես եղեր . բու արամարանու-
թիւնդ սա է որ՝ կէտաղբութեան օրէնքին հա-
մեմատ՝ վերջակէտէն ետքը միայն զլսագիր
կը գրուի : Իմ խոնարհ կարծիքս ալ սա է
որ՝ նոր առջը միշտ զլսագիրով կը սկսի և
և ոտանաւորի մը առջև ղեկ առողը մտք ճող
է : Բայց կրնանք անցնիլ , քանի որ առիկա
ոսպի մը չափ կարեւորութիւն չունի քեզի
համար : Ես միտքի չբաւորութիւնդ լոկ բա-
նաստեղծական տեսակէտէն դատելով մատ-
նանշած էի , քանի որ անձիդ ծանօթութիւնը
ունենալու պատիւը կամ զժողովութիւնը չու-
նիմ : Ըսել ուզած էի Թէ՝ բանաստեղծ չես
կրնար ըլլալ , Թէ և անկէ դուրս ուզածդ ըլ-
լալու վերապահութիւնը բնականօրէն կար
հոգ : Բայց դուն միտքի բացարձակ չբաւորու-
թիւն մը կ'ուզես ցուցադրել : Լաւ , բու գիտ-
նալիք բանդ է : Կ'ուզես բացատրել որ՝ քն-
նադատութեանէ ալ չես հասկնար , ուղիկ տրա-
մարանութեանէ ալ , դատողութեանէ ալ , բա-
ղաբարութեանէ ալ : Ըսելիք չկայ ասոր :
Ես ըսի որ՝ երեսունըննց ոտանաւորներուդ
քսան հատը չեն վերջացած : Դուն կ'ըսես որ
«Նոր Տաղերուն» մէջ կան զուտ նկարագրական

ոտանաւորներ, ուր խմաստաւորութիւն [օճ
գեղեցիկ խոշոր բառ...] չկայ» : Նոյն Թուա-
րանական սխալը ճշդ ենք, երեսունընթինգ հոսանքն
բառն հատը, քան, հասկցա՞ր, չեն վերջացած.
եթէ նկարագրական են, նկարագրութիւնը չէ
վերջացած . . . [կը կտակածիմ նոյն խոսքը որ
սկսած ըլլայ]. . . եթէ պատմական են, պատ-
մութիւնը չէ վերջացած, չէ՞ վերջացած :
Անկէ ետքը, բանի որ կ'ուզես քիչ մը ան-
կեղծութիւն ունենալու մօտենալ, մի՛ ամհար,
խմաստաւորականը պզտիկցուր քիչ մը,
աստիճանը վերջուր և ինծի հետ ըսէ որ
խմաստ չունին : Սիրող՝ մօնշաղին մէջ ան-
հետ [կամ անհեթեթ] բոց մըն է եղեր . կ'ե-
րեայ թէ՛ մէկը եկեր վատեր է զայն ու չես
կրցեր մարել . այս խնդիրը աւելի ջրհանկիր-
ները կը հետաքրքրէ . չհասկցած կէտս սա է
թէ՛ այդ տողը ինչու և ինչպէ՞ս կու գայ պո-
չը ըլլալու տառնաւորի մը՝ որուն զուգը
«Վարդիկանն» է ու փոքն ալ ինչ որ . . .
այս վերջինը կրնայ պարունակել : «Չուրէն
Դարձին»ին մէջ«Երբ»ին հետեւող տողերը վեջ
հաս չեն, 4 անգամ վեջ՝ որ կ'ընէ բանը-
չորս . կարելի է մտցեր ևս զրոյս, մէկ մըն
ալ կարգայ : Ըսի որ «Մատախուղ»ին մէջ
յանգ չկայ : Ատոր ալ բան մը ըսէիր, բանի
որ զիջաներ ևս մեկ անգամուան համար
քննադատութեան պատասխանելու : Ըսի որ
«Անդարձ»ը, որ «Երբ» չունեցող» ըսել է
կարծեմ, վերադարձին խօսքովը կը վերջա-
նայ : Դորձիդ չեկող բանին չես խօսիր, չէ՞...
Հիմա խօսածներդ ալ սխալի տեսներ : «Հրա-
վառ»էն«Կարմիր» «բայլ մը միայն կայ»եղեր.
chic ! անոր համար «Կարմիր կարծառ» կ'ըլլայ,
ե՞՞ : Հնդկահաւէն՝ գոռոց բայլ մը կայ . ու-
րինն զուն տունց օտախ ըսելու՝ կրնաս հաս-
կնալ որ գոռոց Մեծարեկը ըսել կ'ուզեմ, երբ
քեզի ըսեմ Պրն. Հնդկահաւ : Քեզի չբոյնք որ
«ճոյհոյ»ը ցարութիւնեանին սեփականութիւնն
է . բայց գործածելուն տեղը զխնալու է :
«Հոյհոյ»ը մէկ բառ ըլլայ . հինգ բառ ըլլայ՝
ո՞ր լսեր ևս իբր ուրախութեան ազդարակ [*] :

[*] Եթէ հոջ մէկ բառ րլլայ, կ'ըսես,
ան տեսն եղ լեւելու կը ծառայէ . լուսն
սպէկ. երբց երանելայ բարեկամիդ «անխալ» ?
Թարուլին մէջ ինչպէ՞ս չես քննադատեր հոջը,
գոր աւելին յոյսը նկարագրելու գործածած
է . [սեսնէ] Արեւելեան Մարտիկ] . կ'երեւայ
թէ բաժնի չես գիտեր, եւ երբեմն կը փո-
քես ինքզինքդ . . . հոջին հետ :

Մարդուն մէկուն հարցուցեր են. — Հաւին ո՞ր
կողմը համով էս. — «Մորթը և յետասկողմը» :
կը գովեն պատասխանը : Ուրիշ մարդուկ մը,
գովեստը իմանալուն, կը կարծէ թէ՛ զայն
կորզելէ դիւրին բան չկայ : Եւ երբ իրեն կը
հարցնեն. «Դո՞ւմէ չին ո՞ր մասը համով է» .
«Մորթը և յետասկողմը» կը պատասխանէ
ամենայն անտարբերութեամբ : Բու ըրածդ
ալ ճիշդ տա է անս : Քեզի հարցուցի որ
հոգի, շոյս, յոյս, քեզի լեւել . ինչու զխա-
ղիւրակ զրեր ևս, զուն որ տողերը անգամ
զխաղիւրակ չես սկսիր . ստա՞յ եկուր, հա-
սակդ տեսներ քիչ մը, պատասխանէ : Բա-
ւարանէն ժամանակին սորված եմ, և հիմա
քեզմէ սորվելու պէտք չունիմ, Թէ շուրջ,
«բաց կապոյտ» ալ ըսել է. սակայն շուրջին
իրբ serieux գործածութիւնը տ'յնչափ ընդ-
հանրացած է այսօր որ՝ ալ անիկա իբր «չու-
շան»ին ածական ինքն ալ խեղիատակ կը
դառնայ, գործածողն ալ խեղիատակ կը դար-
ձնէ : Ինչու և կ'ամչնաս «անխալ»ին ուրիշ
յանգ չգտայ լեւել ապուր ուսումն» ըսելու :

Բաւարանով բարբառի կ'ուզես, չէ՞ . . .

— Եկօր դա՛ս ինչպէ՞ս կ'ըսէին ժամանակին
պատուելիները, բանի որ հինբու բառե-
րը և բացատրութիւններն ալ կը սիրեալ Լոկ՝
շուս օր ըսել է, զիտէ՛իր . . . : Դոր-
ծածէ տեսներ, Պարսն . չես կրնար, հէ՞,
ինչու, որովհետեւ անիկա ալ իբր մակրայ
լոկ ընդհանրացած ընկած է : Է՛ Սառնաւ
ըսել է. գործածէ՛ : Երկնջ պզտիկ կու ըսել է.
նաե կնիկ, հարս ըսել է. գործածէ՛ : Ատոր պէս
հարիւրաւորներ կրնան գտնել . . . եթէ բա-
րեհաճին Թղթատել բառարանը՝ տունց որուն
օգնութեան, կը տեսնեմ Թէ բան չես կրնար
զրել : Բաւարանին մէջէն յանգ փնտռելով
բանաստեղծութիւն չըլլար—տա էր մանա-
ւանդ ըսել ուզածս : Ես իբր հոյերէն բա-
ւարան Հայկազնեանը միայն կը գործածեմ և
անոր մէջ երբեք չտեսայ ցեծապատարը, ո՞վ
անհաշակ ու անհարակ բառերու դերձակ :
Ատկէ ետքը, ևս խօսած էի «Երբեւայրի իրի-
կուններու շուշան»ին ու «ցրտոտ մարմար»ին
միայն . զուն չես ուզեր խօսիլ, չէ՞ . . . : Եր-
կու Սրինգ»ին մէջ ըրած զրական gaffes մէջ-
տեղ դրած էի . խօսք չկայ . պապանձումն
Զաքարիայ : Կը տեսնեմ որ կը լսես, երբ
անկէ ուրիշ ճար ու ապատանարան չունե-

նառ. անոր համար «լաւարան» բառը խմատ ունի քեզի համար : Իսկ ես կեանքիս մէջ «լաւարան» բառը «վրան» հագնող» չեմ տեսած : Շատ շատ կ'երեւակայեմ որ անիկա համբերու ապաստանարան մը կրնայ ըլլալ Պերելու : Եթէ հոն մտնելու բաղձանք ունիս, վաղժիկի ու բարեբարէ ոտիկա գրականութեան համար : «Անտուան»ին մասին չիտիր Մեծարեկայ աղբարիկը . Վիստիր , Բոնէ խտի խեղճը : Հովուերգութիւն եմէ բու բառարանիդ մէջ—որ «քնդ մտնողը» բլլալուէ խելագարուողիդ—խմատ չունեցող բան կը նշանակէ . աղէկ . ըսելիք չկայ . Եթէ ոչ, բու գրածիդ մէջ կան հիւշ և զարուռ . առ երկու բառերը իշարու բով դնելով և գործին մէջը հովիւ մըն ալ խոնկելով հովուերգութիւն չըլլար : Մեկնաբան . —«Հովին գաղջ (աւիշը) որ անհոտար ընծիւղներու և շաքիլ-գներու ձեռով կը պտնկայ ամէն կողմէ . Ժճ գաղջ գաղջ աւիշը , վարար աղչան . այդ արեւուտ խաղտանքը , որ զարնան կարծրէն «կը զեզու արշին , խոլ ու բարձրուն , ու «աւարկանքով կ'ընդգրկէ հիւզը՝ զոր կանանձ» չի հեղեղով մը կը համբարէ կարծեա» : Առաջ եկէք , երեսնիդ խաչ հաւնեցե՛ք եւ ծաղի զարկե՛ք , ո՛վ հասկցողներ , ո՛վ լեզուազներ , գրագէտներ , բանաստեղծներ , ասիկա մեկնութիւնն է դեռ . Մեծարեկայ անոր պէտքը զգացե՛ք . «Թ՛ճ, Ժճ, այդ աւիշը որ կը զեզու , որ կ'ընդգրկէ հիւզը՝ զոր կը համբարէ» : Ու կ'ըսէ անոր , հոգիդ , խելիդ ո՛ր է : Վարաւայի՜նսկ , Բրիտանիկար , փողփողեմեք , ճառնալուարիս , ազար բառեր են , հէ՛՛ : Ճաշակդ սիրեմ :

Անգամ մը խմացեր ես որ՝ Նարեկացիին գրածները շատ յարգի են և Բայց ինչո՞վ . չես զիտեր . յայտնի կ'երեւայ որ չես կարդացած . Եթէ կարդաս ալ , չպիտի հասկնաս ապահով . կը կարծես որ անիկա իր ոճին համար , իր բնածին ու նորակերտ բառերուն համար համբաւար է , ու այդ բառերը զիբիդ , անոր կրթնելով , կը կարծես ամուր պատիւ մը տուած ըլլալ կանտիկ . այդ պատճառ բու բարկութեան հէ՛ղ , եզին նմանիլ ուզող գորտին պէս ուղերու ձիգերուդ , խանդարուած երեսակալութեանդ մէջ միայն գոյածին ունի : Եւ իմ գրիչս—որուն աւար ծայրը մինչև աշերտիդ խորը նոսաւ յուսած այս անգամ—պիտի վերցնէ անհաւա-

տարակշիւ խմացականութեանդ մտախաղը : Ես Նարեկը կարդալէ ետքը , անոր վրայ գրուած շատ բաներ ալ կարդացած եմ . ամէն մարդ—խաբար քեզի համար չէ— գիտէ որ Նարեկը անուանի է իր խմալուր բառերով . խրթնութիւններով և լեզուական խորթութիւններով . և Եթէ անիկա անմահացած է , իր բանաստեղծական շունչին , հոգիին , ներշնչութիւն պատճառովն է : Ասիկա դաս ըլլայ քեզի որ՝ ուրիշ անգամ խելքդ չհասած բաներուն մէջ բիծող չլսածես : Մական չեմ զարմանար որ՝ զուն Նարեկին բուն արժէքը հասկցած չըլլաս . ապիկա բանաստեղծութեան ոգիին անդեակ մէկու մը արուած է լոկ , Թէեւ կրնայ ըլլալ որ՝ այդ մէկը Նոր Տաղեր հրատարակելու (զմ)բազըլ չէ ունեցած : Դուն կը կարծես որ՝ ալքն ծով ի ծով ծիծաղախիս ծաւալանայր . . . Ի պէ՛ս՝ տաղերու նոյնաճաշնութիւնը Նարեկացիին անունը բերած հասցուցած է մեզի , չէ՞ : Անոր համար « . . . Ժայրիկերու , Ժայրածաւալ ծաղիկներուն» նման տողեր կը շինես ու կը զարմանաս որ ինչո՞ւ Նարեկացիին գունէ հաւատար տեղ մը չեն տար քեզի : Պիտի տան եղեր առկայն , մի վախճար . Դրանձեան բարեկամդ ու վատրի ընկերդ քեզ մէկտեղ պիտի տանին անմահութեան ծոցը : Ուզածիդ ալ ալ չէ՞ :

Պզտիկ դաս մըն ալ , վերջացնելէ առաջ : Քեզի քննադատելու համար — ուրիշ պատճառ կայ — կը գործածես այս բառերը .

—Ածուխով գծագրուած , դարձեցական , անպարկեշտ սգիստրիւն , աշտայտ , ևն .

Դուն Թոմասին Սիւսանն կարդացած ես .

Եթէ ոչ , կարգա , կարգա՛ , կարգա՛ , կարգա՛ : Անոր առաջին արարուածին չորրորդ տեղին մէջ , քեզի պէս մէկը Սիւսանին կ'ըսէ .

—Maraud, faquin, butor de pied plat ridicule !

[Զգիտացնելով բառարան նայէ՛] : Սիւսան , անանկ մը Լեմաղրելով որ զիմայինը ինքզինքը ներկայացուցած է , կը պատասխանէ .

—Ah ! Et moi Cyrano - Savivian Hercule de Bergerac .

Որովհետեւ իմ համեստ միտքս յաւակնութիւնը չունի մեծ զիտեր բնելու , Թոմասին կ'ընդօրինակեմ : Դուն բու տխրողներդ շարած ես , ատտիճանարար , ամէն մէկը իր տեղը դնելով :

Հիմա , երբ կարգը իմն է ինքզինքդ ներ-

«Կայացնելու քեզի, նախ շնորհակալ կ'ըլլամ քեզի բոլոր բարեմասնութիւններդ թուած ըլլալուդ համար ու յետոյ պարգայեալ ու համեատօրէն կը ներկայացնեմ ինքզինքս»

ՓԱՅԼԱԿ

Յ. Գ.—

ՄԻՏՔ ՈՒ ԲՆՈՒԹԻՒՆ

Միտքս անդ ողոր պատճառներու կը կանչէ, ինչպէս շուն մը յիպոստինն դէմ հաշխն, կամ կոնակին ամբարսակին դէմ շաշխն, մէկուն պէս շփոք, միւսին պէս լի մրուռնէ:

Փխնիկ մըն է միտքս, իր քեւերն են «ի՛նչ» է, որ կը սլանայ դէպի «հանգի»ին լոյս հնչիւն. նոն աստուկ մը կը վերածնի իր անխն՝ զոյգ քեւերով ծիածան ու համանչէ:

Ազազակի կ'ըլլայ մերիկ ամպաքե, միտքս՝ որ համոզ* «ինչու»ներուն հնձանն է. զոր կարողին ձեռք մը յանկարծ կը բռնէ:

Կը պարուրէ խաղաղութեամբ իր քեւեւ հրաշալիքովն արեգակ ու կայսրի՝ իր համառփիւն. ամէն բանէ կը ծպտի:

Մտիկս վերջին պահուն կարգացի. ե՛մ է առաջ կարգային, հաւատաւ նեղութիւնը յանձն չէի՝ աններ վերի աղերքը զրելու: Որովհետեւ զուն կը բացատրես կոր արդէն միտքիդ վիճակը: — Միտքդ պտտնաներու կը կանչէ, [որոնք չեն գոր] լիալուսինն դէմ հաշոյ շունի մը պէս, ճէ՞. . .

Պարզուդ հոգին լոյսերու մէջ պառկի. եւ մեղքեր էի այդքանը ըսելու. . . :

Փ.

* En fermentation. [վիճարկեալ ստրկեցա՛ր որ բառերուդ ի՛նչ խնամով գործածուիլը բացատրել պէտք է. առ ալ բան մըն է]:

Ա. ԴԱՐՈՒ

ՆՈՐԱԳԻՒՑ ԱՆՍՏԱՐՈՆ ՄԸ

Երկու հոշակաւոր անցլիացի գիսնականներ՝ Կեւնճէլ եւ Հրնդ, տարիներ շարունակ եղիպտոսի մէջ պեղումներ կը կատարեն: Այս պեղումները այնչափ կարեւոր վաւերական շնչանակները զգայացունց ներքիններու կը սպասեն այս գիսնականներէն: Այս գիսնականներուն շնորհիւ զննուեցան նաեւ խեցիներու վրայ գրած Յիսուսի խօսքեր: Վերջին ասեցներ, այս երկու անխնայ գիսնականները Հիմ եղիպտոսի Օւսիրինոս քաղաքին պեղումներուն միջոցին շարք մը բանկազին հնարքներ զսան, յումարէն լեզուով գրած: Այս հնարքներէն անշուշտ ամէնէն շահեկանն է աւեստանական հաստած մը, զոր անցլերէն բարգմանութիւնով հրատարակեցին Երկու գիսնականները, «Փխնիկներու մէջ զննուած ոչ-կոնֆուսիական աստուծոյ մը հաստածը» վերնագիրով, Օսմարի մէջ. այս տարի՝ Կեւնճէլ եւ Հրնդ իրենց այս բարգմանութիւնը մեկնութիւններով ալ հոլագոյցին: Դժբաղդաբար, այս նարգիւս աստուծոն միայն քերք մը զննուած է: Այս քերքին վրայ Քրիստոս մեղադարձուած սպառնացող պատիժները առաջ կը քերէ. եւ յետոյ ամծամօր աստուծոյն կը շարունակէ իր պատմութիւնը հետեւեալ լեզուով.

«Եւ ան քննունց զանոնք եւ տուջնորդեց զանոնք ուղղակի Սրբութեան վայրերը եւ շրջեալ սահարին մէջ: Այն ասեց Փարիսեցի մը եկաւ, քանաւանդապէս մը, Դեւի ա՛մուով, մօտեցաւ անոր եւ քաւ Փրկիչին. «Ո՞վքա՛յ տաւ ինչ այս սուր վայրերը մտնելու եւ որպէսզի անոքները դիտելու, քանի որ դուն չես լուսացում եւ եւ աշակերտներդ իրենց ասէր չեն մտնում: Դուն անմահուր վիճակով սահար մտաւ, սուրբ վայր, ուր ո՛չ ոք կրնայ մտնել առանց մտնուելու եւ զղեսներ փոխելու, ո՛չ ալ կրնայ մէկը նախնական անօրները դիտել»: — Քրիստոս պատասխան տաւ անոր իր աշակերտներուն

նէս եւ բառ . «Դուն , որ հաս տես-
րին մէջ ես , մահուր ես» : — Բանա-
նայագոյն պատասխանեց անոր . «Ես
մահուր եմ , որովհետեւ Դուքի աւա-
զանին մէջ լուացուած եւ մէկ սանդու-
խէն վար իջած եւ միտէն վեր ելած եմ
եւ սպիտակ ու մահուր զգեսներ հա-
զած եմ եւ անկէ ետք միայն հաս գա-
լով հուրական անօրները դիտած եմ» :
Քրիստոս պատասխանեց անոր եւ բառ .
«Դուն թէք այս ջուրով լուացած ես ,
որ կը հոսի եւ զիւեր ցերեկ անոր մէջ
շունք եւ խոզեր կը նետուին . դուն
եւս մտքդ , արտաքին մահում եւ
վայելեցուցած ես , զորս պտուիկներ եւ
պարունիներ ալ կ'օծեն , կը մահեն ,
կը վայելցնեն եւ կը գեղեցկացնեն
մարդկային հանդիմանումն համար : Ներ-
հապէս , սակայն , անոնք կ'արհեստով
եւ չարութիւնով լեցուն են : Ես եւ իմ
առակերներս , որոնց մասին դուն կ'ը-
սես թէ չեն լուացուած , մենք յաւիտե-
ական կեանքի ջուրին մէջ թափուած
ենք , եւ եկած ենք . . . բայց վա՛յ
անոնց . . . » :

Ահա այս է հորագիտ տեսարանին բե-
կորը , որ դժբաղդաբար անկապ եւ անըն-
քեռնիկ հախադասութիւններով կը վերջա-
նայ : Մինչեւ ճիշտ գտնուած անկանոն
տեսարաններէն այս հասումը կը զանա-
զանուի իր բնականութիւնով եւ առաջին
երեք տեսարաններուն նման ու պատշաճ
լեզուով եւ պատշաճ եղանակով : Այս
հասումին մէջ կը պատկերանայ Քրիստոսի
Փարիսեցիներուն դէմ մղած մեծ պայքարէն
դուրս գալը : Մարկոս Է . 1-23 եւ Մատթ .
Ժե . 1-20, 23, 25 համարներուն մէջ Քրի-
ստոս կը պարզէ իր ներքին կամ հոգեկան
մաքրութեան զարգացումը , Փարիսեցիներուն
արտաքին մաքրութեան դէմ : Կրէնէյ եւ Հրեոյ,
Շիրէրի պէս Նոր-Կտակարանի մասնագէտի
մը ներդրանքներէն վրայ կրթելով , կը
մեծենայ այս հասումին վաւերականութիւ-
նը : Հետայ համալսարանը գիտնա տն մը սա-
կայն , Ա. Պիլիքեր , անգլիական The Jewish
Quarterly Review հանդէսին մէջ կը
յայտարարէ որ՝ մաքրութեան սովորութիւնը

չ'առ ներքին կեցողով զոնուած է այս հորա-
գիտ բեկորին մէջ եւ ան կատարելապէս կը
համապատասխանէ առաջին դարու Հրեա-
ներու սովորութեան : Պիլիքեր , այս հաս-
ումը Մատթեոսի նկարագրութիւններէն
ստեղծած սուգապատում կը համարէ : Ծանօթ
աստուածաբան Ռոֆերպիս վաւերական կը
սեպէլ զայն , մինչդեռ աշխարհագրական Հառ-
նախ անկարելի չի համարիր անոր վաւերա-
կանութիւնը : Հետեւ միայն «Գրիկոյ» բա-
ռին կ'ընդհարի եւ կը կարծէ որ այդ բառը
ստեղծուած ժամանակներ ծագած է :

Ինչ որ ալ թէ արդի գիտութիւնը այս
հասումին վաւերականութեանը մասին ,
մենք թէեւ մեր կանոնական տեսարաննե-
րէն արտքը չեզոքով պատկերած իրողութեան
մը նկարագրութիւնը կը գտնենք այս հաս-
ումին մէջ , սակայն տեսարաններէն յո-
լորդին անձանօր Քրիստոսի խօսքերուն ու
զարգացումն չենք հանդիպիր հոն : Փարի-
սեցիներու եւ Քրիստոսի մաքրութեան մասին
ունեցած զարգացումը ուղիղ համեմատական
է անոնց բարոյական արթնումներէն ,
որոն եւ դուրսէն ներս : Փարիսեցի-
ները արքայութիւն եւ մաքրութիւնը Մով-
սէսի օրէնքներուն մեկնաբանական կատա-
րումին , արտաքին պատշաճութեան մէջ կը
սեռնէին , մինչդեռ Քրիստոս հոգեկան
ներքին մաքրութիւն կը պահանջէր : Այս-
պէս , օրինակի համար , մովսէսական օրէն-
քով զոգերը կը պատժուէին եթէ բռնուէին ,
եթէ յայտնուէր անոնց գողութիւնը . բայց
եթէ զազոցի մնար անոնց արարք , մովսի-
սական օրէնքի պատիժներէն զերծ կը մնա-
յին : Քրիստոսի հարգած բարոյականէն ոչ
ոք կրնայ զերծանիլ : Ամէն մարդ զիսէ իր
յուսի կամ բարի արարք եւ չի կրնար ինն-
քիմէն զազոցի պատիժ արարք մը եւ եթէ ան
համոզուած Քրիստոսեայ մըն է , չի կրնար զերծ
մնալ ինքնադատաբարութենէ : Բարոյակա-
նը իր կենսական օգտակարութիւնը կը սկսի
հոն , ուր մովսիսական օրէնքի ազդեցու-
թեան տանձանքները կը դարձնեն : Իւրեան-
չիւր տնտեսի ներքին , հոգեկան կամ խիզճի
կենցաղին դատարան է բարոյականը : Քրի-
ստոսի այս քննարկումը , որ այս հորագիտ
հասումին մէջ կը շեշտուի , արդէն յայտ-
նի էր սակայն կանոնական տեսարանիչ-
ներուն : Բայց հորագիտ հասումը յուսալ
կու տայ թէ՛ կրնան դէռ այն տեսակ զիւրեք
կամ գրութիւններ գտնուիլ . որոնք մեծ յոյս
կը տնդեն Քրիստոսի քրիստոսի քրիստոսի
խօսքերուն ու կրեւաբարոյական քննարկու-
ման մըն :

Ե. Թ.

Հեղինակորիւնը

ՏՕՐԹ. ՀՕՐԱ ՈՒՕԵՊԵՐՆԻ

Թարգմանորիւնը

ԱՐԲ. ՏԷՐ-ՅԱԿՈԲՅԱՆՆԻ

Հաւատարմները՝ բաւական են չեղակու կարեւորութիւնը ամեն մարդու՝

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

գիրքին, զոր պէտք է կարդալ ամէն անձամբ և կարդացնել իր ծանօթին, և որուն թղթանդամներն անգիտակցաբար մեծ պակաս մըն է, ուսուցիչի մը համար, ինչպէս ուսանողի մը, տարէցի մը համար, ինչպէս երիտասարդի մը, կարդացե՛մ այս հատորը : Ոչ միայն կարգացէ՛ք, այլ նաև ունեցե՛մ զայն անխնայ, այն նկատմամբ որ՝ Տօր. Ուօշպըրնի հեղինակորիւն և Արբ. Տեր-Յակոբեանի թարգմանորիւն եղող գիրք մը չունենալ՝ նշանակելի թերի մը ձգած լլկալ է մասնագիտականներու մէջ : Կեդրոնատեղն է Մաթթէոսեան Թղթավաճառանոցը և գինը 5 զր. :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅԱԻ

ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ ԵԶԱԿԱՆ

ՀԱՅ-ՕՍՄ. ՄԵՐ ԲԱՌԱՐԱՆԸ

Պատշտական, Դիտական և ուրիշ կարեւոր բաւերու Գրանտեղով և բազմաթիւ օրինակներով ձոխացած, իբր 50.000 բաւ, ոճ, ասուրիւն :

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԷՃ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԻ

Օգնական Պետական Խաւարդի և Տիֆլիսի Պէտքեւան Վարժարանի

Այս երկամիութեան միայն երկար զրեւ աւելորդ է . միայն սաչափը բանը որ Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէն և Գեր. Եղիշէ Եպոկ. Գուրեանէ զատ Թուրք և Հայ նշանաւոր գրագէտ լեզուաբաններէ գնահատակամներ կան այս իողճամիտ և յոգնավատակ երկամիութեան սկիզբը : Թուրք նշանաւորագոյն գրողէա-լատնատեղծ էքրէմ պէյ, Բէշատ պէյ, Ահմէտ Բախմ պէյ, հայագէտ Սիւրէյա Պէյ, Պատրիարքարանի Թուրք. Դիւանապետ տաճկագէտ Կարապետ էֆ. Սալատուրեան և արեւելագէտ Ստեփան էֆ. Կուրտիկեան թուրքերէն գնահատակամներ ունին : Հայերէն գնահատակամներ ունին Գուրգէնի, Զօհրապի, Պօղոս Քէրէտաճեանի, Ելքէնճեանի, Ուղուրիկեանի, Հրանտ Ասատուրի, Փանոսեանի, Թէօքիկի, Գաղանճեանի պէս բանասէրներ և զրագէտներ Երկը ունի 900ի մօտ հոծ էջեր, 8 փունթօ գիրով չարուած . ձօնուած է ուսուցչապետ Ռ. Յ. Պէրպէրեանի և կը պարունակէ հեղինակին մեծագիր լուսանկարը : Թուղթը ընտիր, տպագրութիւնը ընտիր [Տէր-Ներսէսեան և Պէրպէրեան], կաղմը փառաւոր [Մաթթէոսեան] : Կը վաճառուի կանխիկ 35 զրուշի : Միակ կեդրոնատեղն է Պալկնց Գրագունը : 4—10

ՀԱՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ անոնք՝ որ կը բաղձան Մասիսի մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան, պէտք է մտնան մեր պայմանը թէ, Ձ օրինակ զրկուած, գիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական .— Բա-
ժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
դրշ., գաւառներու համար՝ տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ.
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20
ֆր. : Զեռքէ վաճառում՝ Տասը փարս : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ յուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին
մէջ, արժանացած՝ բնթերցողներու գնահատմանը, իր առաւելութիւններէն
մէկն է ՊՍԿԵՐԱԶԱՐԻ ԸՈՒՄԻՆ հանգամանքը, որով իր բնթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, և կեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, եր-
կրագործական, իրաւաբանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ևն : ԱՐԵՒԵԼՔ վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագին ուղղել Տէր և Տնօրէն Գաղազին
էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը Խմբագրատունը :



Jeprendstous les jours
de la vraie
CRÈME DE MORUE
de la Ph^{ie} PEQUART-VERDON & Co
C'est très bon !!!
Petite mère, se méfie des produits
similaires; mauvais et digérant mal.
Le Flacon : 3'50 dans toutes Pharmacies.

« SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. »

Նշանաւոր Տօքթ. Բէքառի
այս էմուլսիօնը կը գերա-
զանցէ հրատարակի վրայ
գտնուած բոլոր իր նմաննե-
րը : Զուկի իւրի տեղ կը գօր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ անի տղոց և տկար

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեան, Կ. Պոլսի :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ տկուայի և լինտի հիւանդութիւնները, փտած տկուաները կը լեցնէ՝
առողջ տկուաներու պէս երկար առեն գործածուելու պայմանով :

ԲՈՒՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՒՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն
արուեստական տկուաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ
Բարձր-Գարու, թիւ 8, Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ Էնդ-
շարթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

Իզմիտի, Օվաճըզի և չրջակայքի Մասիսի գործակալն է Տիար
Յակոբ Սարգիսեան, որուն կրնան դիմել փափաքողներ, բաժանորդագ-
րուելու համար, յանձնելով բաժանորդագրինը :

Բաւաստեղծական նորագոյն հրատարակութիւնն է
«ՄԱՍԻՍ»Ի ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

“ՊԱՏՐԱՆՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ.”

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՄԱՄԵԱՆ-Ի

Փնտել ամեն կողմ այս հաստը: Գինը 5 դրուշ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԶԻՅԹԻ-ՍՍ.ՐՍ.ՅԻ

ՄԻՄԻՏԻ ՄԸ ՐԿԾՆԵՐԸ

Դեղեցիկ ապագրութիւնով, գեղարուեստական կողքով, գրական
հրապուրիչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակու-
թիւնը: Էջ 280: Գինը՝ 7 զրշ.: Կեդրոնատեղ՝ Սթամպոլ, Շիրին խան,
թիւ 7, Օնիկ և Ընկ.: Կը գտնուի ամէն գրավաճառի քով:

Դպրոցներու համար անհրաժեշտ

Դասակէսիներու համար կարեւոր

«Աստի»ներու համար գեղեցիկագոյն զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրատարակելու վաւերացուած Հանր. կրթութեան նախարարու-
թիւնէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայրերուն
և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հաս զնիւ այս
կարեւոր և գեղեցիկ գործէն: Գինն է շրջանակով 85, առանց շրջա-
նակի 65 զրշ. գտնուողներու համար՝ իւր սնտուկի և փոխադրութեան
ծախք 15 զրշ. աւելի: Դիմել՝ Պապը Ալի Ճատաէսի, թիւ 56, Յովհ. էֆ.
Ազնաւորի «Օսմանլը» Դրատունը:

ԵՐԴ. ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԻՍ «ՍԻՆԿԷՐ»Ի

Բերա, Մեծ-Փողոց, Թ. 343, Ա. Յարկ

Ամեն օր քաջ է.

Մ Ո Ւ Տ Բ Ը Զ Ր Ի

Ա. Կազի մզանակ նետեալ ցուցանոցներէն. Բարիք 1900, Սէն-Լուի 1904,
Միլան 1906, Պետու 1906:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. ԱՄՍՍԻՍ: Ամասիայի և շրջակայնե-

րու գրական պէտքերուն լիովին գոհացում ապու համար է որ հիմ-
նուած է այս նոր դրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաս-
տուին տրուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնաւորապէս յանձ-
նարարելի է այս դրատունը բոլոր ուսուցիչներուն ու դրասէրներուն,
իւր միակ կեդրոնատեղ լաւագոյն դասագիրքերու և լաւագոյն հրա-
տարակութիւններու:

“ՄԱՍԻՍ”Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և զտւածներու համար տարեկան 60 դրշ :
 Արտասահմանի » » 14 Ֆրանք :
 Թղթատարութեան ծախքը մեր վրայ :
 Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարզեցումները,
 միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :
 Մասինի բաժանորդագրութիւնը լաշարձակապէս կա խիկ է :
 Իրամ կարելի է զրկել փոխանակադիրով, օմանեան կամ
 օտար մանսա-փոսթով և օմմ. թղթատարական նամակադրոշ-
 մով, 20 հաւր մէկ մէճիտի հաշիւով :
 Զնորատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :
 Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ”Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճաւսէսի, Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزته سی اداره خانه سی

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄԱՍԻՍ”Ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, nr 1000
 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ,
 կրնայ ստացուիլ Խմբագրութենէս, կանխիկ փոխար-
 ժէովը՝ 60 դրշ. կազմուած 65 : Թղթասարով ղրկուելիք
 Հասորներու համար պէտք է 5 դրշ. աւելի վճարել :

Ն Ո Վ Ք

Նոր Տարուան առաջին նորոտրիւնը

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԻ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

Այս զիրքին համար յատկապէս փորագրուած 300 պատկերներով .—
 Անմիձեւիորէն ընտրեցաքոյն Դասագիրքը՝ Տարր. Դասընթացքի երկսեռ
 աշակերտներու համար : Գին 5 դրշ. Կեդրոնատեղն է հեղինակին ԳԱ-
 ՐՈՒՆ Գրատունը, Կ. Պոլիս, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 :

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՅԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Գասը - Բէոյ, Մէօհիւրսար ճաւսէսի